

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE  
AND  
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS  
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան  
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան  
ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Սուսաննա Բաղդասարյանը  
Կարինե Բալայանը

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՔՐԻՍՏՈՍՏՈՍՈՍԻ, ԱՐՔԵՄԱՆՂԻՏ ԳԵՈՐԳԻՈՒՄ ՊԱՊԱՔՐԻՍՏՈՍՏՈՍԻԻ**  
**ԵՎ ԹԻԹԻՆԱ ԼՈՒԻՋԻՂՈՒԻ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ**  
**ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Կիտիումի եպիսկոպոս՝

Մետրոպոլիտ Քրիստոստոմոսի՝ Թուրքիայի դեմ 1989թ. հուլիսի 21-ին ներկայացրած  
և 1989թ. հուլիսի 25-ին գրանցված թիվ 15299/89 գանգատի,

Արքեմանդրիտ Գեորգիոս Պապաքրիստոմոսի՝

Թուրքիայի դեմ 1989թ. հուլիսի 21-ին ներկայացրած և 1989թ. հուլիսի 25-ին  
գրանցված  
թիվ 15300/89 գանգատի,

Թիթինա Լուիզիդուի՝ Թուրքիայի դեմ 1989թ. հուլիսի 22-ին ներկայացրած  
և 1989թ. հուլիսի 31-ին գրանցված թիվ 15318/89 գանգատի կապակցությամբ

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը 1991թ. մարտի 4-ի դժնփակ  
նիստում, կազմով՝ պրն Ս. Ա. Նորգաարդի՝ նախագահ, պրն Ջ.Ա. Ֆրաուեհնի, պրն  
Ս. Թրեչսելի, պրն Ֆ. Երմակորայի, պրն Գ. Սպերդուտիի, պրն Ի. Բուսուտիլի, պրն  
Գ. Ջորունդսոնի, պրն Ա.Ս. Գյոզուբույուկի, պրն Ա. Վեյթսելի, պրն Ջ.-Ս. Սոյերի, պրն  
Յ. Դանելիուսի, սըր Բասիլ Յոլի, պրն Ք.Լ. Ռոզակիսի, պրն Ա.Վ. Ալմեյդա Րիբեյռոյի,  
պրն Ս.Պ. Պելոնպայի, պրն Յ.Ս. Կրյուզեռի՝ Հանձնաժողովի քարտուղար,

Ղեկավարվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների  
պաշտպանության մասին կոնվենցիայի 25-րդ հոդվածով,

Ելնելով 1987թ. հունվարի 28-ին՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն  
Թուրքիայի արած հայտարարությունից,

Ելնելով Կիտիումի եպիսկոպոս՝ Մետրոպոլիտ Քրիստոստոմոսի՝ 1989թ. հուլիսի  
21-ին Թուրքիայի դեմ ներկայացրած գանգատից, որը 1989թ. հուլիսի 25-ին գրանցվել  
է որպես թիվ 15299/89 գործ,

Ելնելով արքեմանդրիտ Գեորգիոս Պապաքրիստոմոսի՝ 1989թ. հուլիսի 21-ին  
Թուրքիայի դեմ ներկայացրած գանգատից, որը 1989թ. հուլիսի 25-ին գրանցվել է  
որպես թիվ 15300/89 գործ,

Ելնելով Թիթինա Լուիզիդուի՝ 1989թ. հուլիսի 22-ին Թուրքիայի դեմ  
ներկայացրած գանգատից, որը 1989թ. հուլիսի 31-ին գրանցվել է որպես թիվ  
15318/89 գործ,

Ղեկավարվելով Հանձնաժողովի 1989թ. նոյեմբերի 9-ի որոշումներով առ այն,  
որ գանգատները պետք է միավորվեն և այդ մասին պետք է ծանուցվի պատասխանող  
Կառավարությանը, և որ Կառավարությունը պետք է հրավիրվի՝ գանգատների  
վերաբերյալ գրավոր բացատրություններ ներկայացնելու համար,

Հիմնվելով պատասխանող Կառավարության 1990թ. փետրվարի 28-ի  
բացատրությունների վրա և ի պատասխան դրանց՝ 1990թ. մայիսի 6-ին [գանգատներ  
թիվ 15299/89 և 15300/89] և մայիսի 11-ին [գանգատ թիվ 15318/89] դիմողների  
ներկայացրած բացատրությունների վրա,

Հաշվի առնելով 1990թ. դեկտեմբերի 18-ին դիմողների ներկայացրած հետագա  
գրավոր բացատրությունները,

Հիմնվելով 1991թ. հունվարի 11-ի նիստին կողմերի ներկայացրած բանավոր  
բացատրությունների վրա,

1991թ. հունվարի 11-ի և մարտի 4-ի խորհրդակցություններից հետո,

Ընդունեց հետևյալ որոշումը.

## **ՓԱՍՏԵՐԸ**

I. Գանգատների առանձին հանգամանքները

### **Գանգատ թիվ 15299/89**

Առաջին դիմողը Կիպրոսի քաղաքացի է, ծնված 1938թ.: Ներկայումս բնակվում է Լառնակայում: Նրան ներկայացնում է Նիկոսիայում գործող փաստաբան դկտ. Կ. Քրիստոստոմիդեսը:

Գործի փաստերը, դիմողի ներկայացմամբ, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. 1989թ. հուլիսի 19-ին՝ Թուրքիայի կողմից Կիպրոսի գրավման 15-րդ տարեկիցի նախօրեին, «Վերադարձ» կանանց համակիպրոսյան շարժումը կազմակերպել էր ցույց՝ նպատակ ունենալով հայտարարել փախստականների՝ իրենց տները վերադառնալու իրավունքի մասին: Նրանք նախատեսում էին երթ կազմակերպել դեպի «բուֆերային գոտի» և այնտեղ մնալ ամբողջ գիշերվա ընթացքում մինչև արևածագ՝ 1974թ. հուլիսի

20-ի այն պահը, երբ թուրքական առաջին պարաշուտիստ-դեսանտայինները ոտք դրեցին Կիպրոսի հողի վրա: «Բուֆերային գոտին» Կիպրոսում Միացյալ ազգերի զինված ուժերի՝ ԿՄԱԶՈՒ (UNFICYP) պատասխանատվության տակ գտնվող հողակտոր է, որն ընկած է Թուրքիայի զավթիչ բանակի պահակակետերի և Կիպրոսի Հանրապետության պետական սահմանի միջև:

2. Երեկոյան 5:45-ին սուրբ Կասիանոսի եկեղեցում, որը գտնվում է Կիպրոսի կառավարության հսկողության տակ գտնվող տարածքում, առաջին դիմողը՝ այլ հոգևորականների հետ, կատարում էր ժամերգություն և աղոթում զոհվածների համար: Դրան հետևել է 1947թ. բռնազավթման ընթացքում սպանվածների հիշատակին նվիրված պատարագը և ծաղկեպսակների տեղադրումը: Ներկաները կանայք էին: Երեկոյան 6:15-ի շրջանում կանայք լքել են սուրբ Կասիանոսի եկեղեցին: Մոտավորապես ժամը 7:00-ին առաջին դիմողը վերջացրել է երեկոյան աղոթքը:

3. Այնուհետև առաջին դիմողին խնդրել են, որպեսզի նա պատարագ մատուցի և աղոթի զոհվածների համար սուրբ Գևորգի չգործող եկեղեցում, ուր մինչ այդ հավաքվել էին բազմաթիվ կանայք: Սուրբ Գևորգի եկեղեցու մատուռը գտնվում էր «բուֆերային գոտում»՝ սուրբ Կասիանոսի դպրոցի բակում: Երբ առաջին դիմողը մտել է եկեղեցի, ԿՄԱԶՈՒ-ի ներկայացուցիչները ողջունել են նրան:

4. Այն պահին, երբ նա շարունակում էր կարդալ աղոթքները, թուրք զինվորները, Կիպրոսի թուրք «ոստիկանների» հետ համատեղ հանկարծակի ներխուժել են եկեղեցի և սկսել, առանց որևէ բացառության, ծեծի ենթարկել բոլոր ներկաներին: Առաջին դիմողին, որն այդ ժամանակ գտնվում էր եկեղեցում, դաժանաբար ծեծել են հրացանների կոթերով և մահակներով, ինչպես նաև բազմաթիվ հարվածներ են հասցրել ոտքերով: Մահակի հերթական հարվածը նրա գլխից քահանայի գլխարկը զցել է գետնին: Մինչ առաջին դիմողը փորձել է բարձրացնել այն, նրանք շարունակել են ծեծել, հարվածել ծնկներով, հայիոյել և նվաստացնել նրան: Մի «ոստիկան» բռնել է նրա դաստակը, ոլորել այն և, ուժեղ ցավ պատճառելով՝ ստիպել առաջ գնալ:

5. Երբ առաջին դիմողին քարշ են տվել դեպի դուրս, նա տեսել է թուրք զինվորների պաշտպանության տակ գտնվող քաղաքացիների մի մեծ խումբ: Այս մարդիկ բռունցքներով հարձակվել են նրա վրա, սկսել հայիոյել և թքել նրա վրա: Ուժգին հարվածով նրա աջ ականջին հասցված վնասվածքից ապաքինումը տևել է հինգ օր:
6. Նրան նստեցրել են մեքենա, որով՝ երկրորդ դիմողի և բազմաթիվ կալանավորված կանանց հետ, նրանց տարել են Նիկոսիայում գտնվող «Pavrides Garage»:
7. «Pavrides Garage»-ում առևանգիչները փորձել են խլել առաջին դիմողի անձնական իրերը, խաչը և կրծքի խաչը: Սակայն նա հրաժարվել է հանձնել դրանք: Դրսում հավաքված ամբոխը քարեր էր նետել «Garage»-ի վրա, և քարերից մեկը ներս է ընկել, սակայն ոչ ոք չի տուժել:
8. Հուլիսի 20-ին՝ առավոտյան ժամը 1:00-ին, նրանք սկսել են առաջին դիմողի հարցաքննումը: Հարցաքննությունը տևել է մոտավորապես 40 րոպե: Հարցաքննողներն իրենց հարցերն ուղղում էին հունարեն և արձանագրում թուրքերենով: Առաջին դիմողը հրաժարվել է ստորագրել այդ արձանագրության տակ: Այն հարցին, թե արդյո՞ք ինքը կմասնակցի որևէ այլ երթի, նա պատասխանել է, որ կմասնակցի ցանկացած խաղաղ երթի, քանի որ չի ընդունում բռնությամբ և զենքի ուժով պարտադրվող որևէ սահման. նա չի արել ոչ մի սխալ բան, այլ պարզապես ներկա է եղել կորած և մահացած մարդկանց համար սուրբ տաճարում մատուցված ժամերգությանը:
9. Գիշերը՝ ժամը 2:00-ի սահմաններում առաջին և երկրորդ դիմողները բերվել են Նիկոսիայի «Seragio» կոչվող ոստիկանության բաժանմունք: Նրանց տարել են մի սենյակ, որտեղ նրանք մնացել են ամբողջ գիշեր՝ ժամերով նստած մնալով երկու աթոռների վրա: Առավոտյան սենյակ են մտել երկու թարգմանիչներ, որոնց պահելաձևը սադրիչ էր: Առաջին դիմողը հրաժարվել է նախաճաշից:
10. 1989թ. հուլիսի 20-ի կեսօրին առաջին դիմողին հայտնել են, որ նա կկանգնի «դատարանի» առջև: Նրան տարել են ներքնահարկում գտնվող մի մեծ սենյակ, որտեղ նրան առաջադրվել է «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն» ապօրինի մուտք գործելու և ռազմական Ա գոտու սահմանները խախտելու մեղադրանք: «Դատախազը» պահանջել է առաջին դիմողին 3 օր պահել կալանքի տակ՝ հետաքննությունն ավարտելու համար: «Դատավորը» որոշել է երկու օրվա կալանավորում:
11. Այնուհետև առաջին դիմողը տեղափոխվել է «Ortagiougou» կոչվող բանտ: Բանտախցում նրա հետ մեկտեղ կալանքի տակ էին գտնվում ևս չորս անձ: Երեկոյան ժամը 7:00-ի սահմաններում նրան այցելել է «Արդարադատության նախարարը»: Նա խնդրել է բժիշկ բերել, քանի որ ինքը հարբուխով հիվանդ էր: Բժիշկը խոստացել է դեղահաբեր և ասպիրին ուղարկել, սակայն այդ դեղերն այդպես էլ տեղ չեն հասել:
12. Դրանից անմիջապես հետո կալանավորներին շարք են կանգնեցրել՝ հաշվելու համար: Այնուհետև կալանավորներին նորից շարք են կանգնեցրել՝ այս անգամ որպեսզի ոստիկանն ստուգի բոլոր կալանավորների ներկայությունը: Երեկոյան 11:30-ի սահմաններում նրանք սկսել են գործերի հարուցումը: Հուլիսի 21-ի գիշերը՝ 2:00-ի կամ 3:00-ի շրջանում կալանավորներին արթնացրել են նկարելու համար: Այնուհետև, ամբողջ գիշերվա ընթացքում, նրանց ամենատարբեր պատճառներով անընդհատ արթնացրել են:
13. Առավոտյան ժամը 10:00-ին առաջին դիմողին տարել են «դատարան»: Ներկա է եղել նաև մեկ թարգմանիչ: Առաջին դիմողը վիճարկել է որևէ պետության կամ միջազգային կազմակերպության կողմից չճանաչված անօրինական վարչակարգի «դատարանի» իրավազորությունը: Նա բողոքել է, որ ենթարկվել է անօրինական կալանավորման իր իսկ երկրում եկեղեցում աղոթք կարդալիս:

Ավելին, կալանավորումը տեղի է ունեցել մի տարածքում, որը գտնվում է Միացյալ ազգերի հսկողության տակ: Առաջին դիմողը հայտարարել է, որ անմեղ է:

14. Առաջին վկան հայտարարել է, որ ինքն այն տարածքի համար պատասխանատու ռազմական սպան է, որտեղ ձերբակալվել է առաջին դիմողը: Նա հայտարարել է, որ առաջին դիմողը խախտել է «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» սահմանը, և որ ինքը տեսել է, որ ձերբակալման պահին առաջին դիմողը գտնվել է «Թուրքիայի տարածքում»: «Դատավորը» մերժել է վկային ուղղված առաջին դիմողի այն հարցը, թե արդյո՞ք վկան գիտեր, որ այն տարածքը, որտեղ տեղի է ունեցել կալանավորումը, գտնվում է ԿՄԱԶՈՒ-ի հսկողության տակ: Ավելի ուշ վկան հայտնել է, որ չի տեսել, թե առաջին դիմողը որտեղ է կալանավորվել:

15. Առաջին դիմողը հրաժարվել է մյուս վկաների խաչաձև հարցաքննությունից, որպեսզի տպավորություն չստեղծվի, որ նա ընդունում է «դատարանի» իրավազորությունը: «Դատարանը» չի փոփոխել իր վճիռը:

16. Առաջին դիմողին նորից տարել են բանտ: Նա Կարմիր խաչից ստացել է սրբիչ և որոշ սննդամթերք: Կեսօրին կալանավորներին այցելել են Միացյալ ազգերի կազմակերպության ներկայացուցիչները:

17. Այնուհետև առաջին դիմողին խուզարկել են և նորից տարել «դատարան»: «Դատավորը» ստիպված էր ընդհատել «որոշման» հրապարակումը, քանի որ դրսում հավաքված ամբոխը աղաղակում էր՝ « մարդասպան քահանա», «դավաճան քահանա» և «տվեք մեզ այդ քահանային»: Առաջին դիմողը «մեղավոր» է ճանաչվել: Նա կրկնել է, որ չի ընդունում «դատարանի» իրավազորությունը, որ ինքն ապօրինի կալանավորվել է Կիպրոսի տարածքում՝ հոգևորականի իր պարտականությունները կատարելիս և խաղաղ ցույցի մասնակցելիս: «Դատավորը» հիշեցրել է, որ առաջին դիմողը կալանավորվել է Թուրքիայի տարածքում: Երբ ամբոխը մոտեցել է «դատարանին», «դատավորը» ընդհատել է նիստը և իր գրասենյակում ընդունել Ռոյտերի ներկայացուցչին, որը հետևում էր «դատավարության» ընթացքին:

18. Երբ «դատավորը» վերադարձել է, առաջին դիմողը նորից բողոքել է իր կալանավորման դեմ: ՄԱԿ-ի երեք ներկայացուցիչների ներկայությամբ նա պահանջել է, որպեսզի ՄԱԿ-ը ստանձնի իր պաշտպանությունը: «Դատավորը» հիշեցրել է, որ պաշտպանելը «երկրի ոստիկանության» գործն է: «Դատարանը դատապարտել է» երեք օրով ազատազրկման և 100.000 ԿՖ տուգանքի վճարման, կամ տուգանքը չվճարելու դեպքում՝ տասն օրով ազատազրկման:

19. Այն մեքենան, որով առաջին դիմողը տեղափոխվել էր բանտ, ենթարկվել է ամբոխի հարձակմանը և նետված քարերից մեկը դիպչել է ապակյա պատուհանին:

20. Հուլիսի 23-ին, կիրակի օրը, առաջին դիմողը թույլտվություն է խնդրել բանտարկյալների հետ համատեղ աղոթքներ կարդալու համար: Քանի որ կին բանտարկյալների հետ շփումն արգելված էր, աղոթքին մասնակցել են միայն տղամարդ բանտարկյալները:

21. Հուլիսի 24-ին «բանտի սպան» ընդհատել է ժամերգությունը: Առաջին դիմողը ՄԱԿ-ի ներկայացուցիչներից ստացել է հագուստ և իր եկեղեցական զգեստը, սակայն բանտապետը հայտնել է նրան, որ այսուհետև աղոթքները և ժամերգությունն արգելվում են: Առաջին դիմողը դիմել է ՄԱԿ-ին և այդ պահից սկսած՝ հրաժարվել սննդից և որևէ բժշկական օգնությունից:

22. Հուլիսի 25-ին բանտարկյալներին պետք է այցելեր բժիշկը: Առաջին դիմողը հրաժարվել է բժշկական ստուգում անցնելուց: Առավոտյան ժամը 11:30-ի սահմաններում նա նորից հարցաքննվել է: Ավելի ուշ՝ նույն օրը, նրանից առգրավվել են բոլոր անձնական իրերը, ժամացույցը, խաչերը և շղթաները:

23. Հուլիսի 26-ին առաջին դիմողը նորից հրաժարվել է բժշկական ստուգումից քանի դեռ զրկված էր աղոթելու իրավունքից: Կեսօրին նրան տեղափոխել են մենախուց՝ պատճառաբանելով, որ նա իրավունք չունի հացադուլ հայտարարելու: Նրան, մինչև հաջորդ առավոտ փակել են մութ և հեղձուցիչ շոգ բանտախցում:

24. Հուլիսի 27-ին նրան տարել են մի սենյակ, որտեղ արդեն հավաքված էին հարցաքննողները, բժիշկը և բանտապետը: Նա նորից հրաժարվել է բժշկական քննությունից և սննդից, որից հետո նրան փակել են 2x1.5 մետր մակերեսով կեղտոտ և մութ խցում: Նրան ասել են, որ իր անձնական իրերը և մահճակալի ծածկոցը կբերեն նախորդ խցից, բայց այդպես էլ չեն բերել: Առաջին դիմողը մնացել է այդ խցում մինչև ՄԱԿ-ի ներկայացուցչի այցելությունը: Նրան հետ են տարել նախկին խուցը և հայտնել, որ մենախցում իր պատիժն ավարտվել է: Նա, բանտապետի ներկայությամբ, բողոքել է ՄԱԿ-ի ներկայացուցչին՝ մեկուսացման և ընդհանրապես կալանավորման պայմաններից: Ի պատասխան՝ բանտապետը հայտարարել է, որ բանտերն ունեն իրենց կանոնները: Նույն օրը՝ ավելի ուշ, ՄԱԿ-ի ներկայացուցիչները տեղեկացրել են առաջին դիմողին, որ նա ազատ կարձակվի օգոստոսի 3-ին: Երեկոյան նա ուշագնաց է եղել և փսխել: Նա շարունակել է հրաժարվել բուժօգնությունից կամ «ոստիկանների» որևէ օգնությունից: Նրա հետ նույն խցում գտնվող բժիշկ Ա.Ս.-ն շատ է օգնել նրան:

25. Հուլիսի 28-ին՝ ուրբաթ օրը, դիմողի մահճակալի մոտ սնունդ է դրվել: Երբ նա նորից հրաժարվել է, նրանք համառել են, և ներս է մտել հեռուստատեսության աշխատակիցների մի խումբ, որպեսզի նկարահանի, որ նրան սնունդ է տրամադրվել:

26. Հուլիսի 25-ի կեսօրին, երբ առաջին դիմողին տարել են բանտապետի աշխատասենյակ, նա կրկին հրաժարվել է բուժօգնությունից: Բանտապետը հայտնել է, որ նա կարող է լողանալ և նախապատրաստվել, քանի որ երեկոյան 8:30-ին ազատ է արձակվելու: Ժամը 8:00-ին նրան հայտնել են, որ ազատ արձակումը հետաձգվում է մինչև հաջորդ օրը: Նրան նորից սնունդ են առաջարկել, և նա կրկին հրաժարվել է: Երեկոյան նա նորից ուշագնաց է եղել: Նրան օգնություն է ցույց տվել երկրորդ դիմողը:

27. Հուլիսի 30-ին նրան խուզարկել են և տարել բանտապետի աշխատասենյակ: Այնտեղ էին հեռուստատեսության աշխատակիցները, սակայն առաջին դիմողը հրաժարվել է որևէ հայտարարություն անելուց:

28. Ազատ արձակվելուց հետո նրան տարել են Լառնակայի հիվանդանոց, որտեղ նա անցկացրել է հինգ օր՝ ուժասպառ վիճակի պատճառով:

### **Գանգատ թիվ 15300/89**

Երկրորդ դիմողը Կիպրոսի քաղաքացի է՝ ծնված 1949թ.: Այժմ բնակվում է Նիկոսիայում: Նրան ներկայացնում է Նիկոսիայում գործող փաստաբան՝ դկտ. Կ. Քրիստոստոմիդեսը:

Գործի փաստերը, դիմողի ներկայացմամբ, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. 1989թ. հուլիսի 19-ին երկրորդ դիմողը առաջին դիմողի հետ մեկտեղ, մասնակցել է «բուժերային գոտում» գտնվող՝ սուրբ Գևորգի չգործող եկեղեցում անցկացվող պատարագին: Երբ նրանք մոտեցել են եկեղեցուն, մուտքի մոտ կանգնած ՄԱԿ-ի երկու սպաները ոչ միայն չեն կանգնեցրել նրանց, այլև դիմավորել են զինվորական ողջույնով:

2. Երբ թուրք զինվորները և «ոստիկանները» իրենց էլեկտրական մահակներով սկսել են ծեծել կանանց, երկրորդ դիմողը փորձել է պաշտպանել նրանց: Նրան անգթորեն ծեծի են ենթարկել և զցել գետնին: Զինվորները

պատահուտել են նրա հագուստը, ոտքի տակ զցել նրա քահանայական գլխարկը՝ շարունակելով բռնցքներով և ոտքերով հարվածներ հասցնել և թքել նրա վրա: Հարվածներից հետո մնացած կապտուկները երկար ժամանակ չէին ապաքինվում, իսկ ձախ ոտքի վրա մնացել են կոշտ գոյացումներ: Թուրքերից մեկը բռնել է նրա մորուքից և քաշել այնքան, մինչև արմատներից պոկել է մի փունջ մազ: Քողարկող համազգեստ հագած մի թուխ թուրք զինվոր այնպիսի ուժգնությամբ է բռնցքով հարվածել նրա դեմքին, որ նա սուր ցավ է զգացել: Քաշքշուկի մեջ նա կորցրել է ակնոցները:

3. Երկրորդ դիմողին դեպի ավտոբուս տարել են ամբոխի միջով, որը հայիոյուն էր, թքում և քաշքշում նրան: Նա տանում էր իր պատահուտված հագուստի կտորտանքը և քահանայական գլխարկը, որն այլևս հնարավոր չէր կրել: Նրա դեմքը և հագուստը ամբողջովին թքոտված էին: Ամբոխի միջով անցնելու ամբողջ ընթացքում նա հարվածներ էր ստանում: Նրան տարել են “Pavrides Garage”: Դրսում հավաքված ամբոխը գոռում- գոչում էր, սպառնում, պատուհաններին և տանիքին քարեր նետում՝ վախեցնելով և տազնապ ստեղծելով կալանավորվածների շրջանում: Քարերից մեկը՝ կոտրելով կտուրը, ներս է ընկել: Մի պահ զինվորները թույլ են տվել ամբոխին ներխուժել “Pavrides garage”, սակայն քիչ անց դուրս են մղել այնտեղից:

4. Հունիսի 20-ի գիշերվա ժամը 1:00-ին նրանք եկել են երկրորդ դիմողին հարցաքննելու: «Ոստիկանները» իրենց հարցերն ուղղել են հունարեն, իսկ հարցաքննողներից մեկը կազմել է արձանագրություն՝ թուրքերենով: Երկրորդ դիմողը հրաժարվել է ստորագրել այդ արձանագրությունը: Գիշերվա ժամը 2:00-ի շրջանում երկրորդ և առաջին դիմողներին տարել են “Seragio” կոչվող «ոստիկանության բաժանմունք»: Նրանց թողել են մեկ զինվորի հսկողության ներքո, որին շուտով փոխարինել է մեկ ուրիշը: Այդ գիշեր նրանց այցելել են երկու անձինք, որոնց վարքագիծը սադրիչ էր: Կեսօրից հետո՝ ժամը 2:30-ին, նրանց հրամայել են վայր իջնել՝ «դատարանի» առջև կանգնելու համար:

5. «Դատավարության» ընթացքը շատ կարճ էր: «Դատավորը», որին առաջարկվել է կալանավորումը երկարաձգել երեք օր ժամկետով՝ հետագա հարցաքննումների համար, որոշել է այն երկարաձգել երկու օր ժամկետով:

6. Այնուհետև երկրորդ դիմողին տեղափոխել են “Seragio” կոչվող բանտ, որտեղ նրան այցելել է «Արդարադատության նախարարը»:

7. Հունիսի 21-ին՝ գիշերվա ժամը 1:30-ին, երկրորդ դիմողին արթնացրել են և տարել մի սրահ, որպեսզի նա գրանցի իր անունը: Ավելի ուշ նա կանգնել է «դատարանի» առջև: Խմբի անունից խոսել է առաջին դիմողը: Վկաները ստել են: «Դատարանի վճիռը» մնացել է անփոփոխ:

8. Բանտում երկրորդ դիմողը Կարմիր խաչից ստացել է սրբիչ: Կեսգիշերից հետո նրան արթնացրել են և լուսանկարել՝ ձեռքերում իր անվամբ ցուցանակ բռնած:

9. Հունիսի 22-ին պահակներն ընդհատել են բանտարկյալների առավոտյան աղոթքը՝ ռադիոընդունիչի բարձր երաժշտությամբ: Կեսօրին նրանց այցելել են ՄԱԿ-ի ներկայացուցիչները:

10. Ավելի ուշ երկրորդ դիմողը նորից կանգնել է «դատարանի» առջև: Դրսում հավաքված ամբոխի գոռում- գոչումն այնքան բարձր էր, որ «դատավորը» ստիպված է եղել ընդհատել «դատավճռի» ընթերցումը: Երկրորդ դիմողը «մեղավոր» է ճանաչվել: Նա դատապարտվել է ազատազրկման՝ երեք օր ժամկետով և 100.000 Կիպրոսի ֆունտ տուգանքի, կամ տուգանքի չվճարման դեպքում՝ տասն օր ժամկետով ազատազրկման: «Դատարանի» ելքի մոտ հավաքված ամբոխը հարձակվել է կալանավորների վրա: Քարերի հարվածներից կոտրվել է ավտոբուսի դիմացի ապակին: Ավտոբուսը փոխել է երթուղին, և մեծ արագությամբ ընթացել է դեպի բանտ:

11. Կիրակի օրը՝ հուլիսի 23-ին, հիշատակի ժամերգություն է մատուցվել, և տղամարդ բանտարկյալներն աղոթել են. կին բանտարկյալների մոտ քահանաների մուտքն արգելել է: Հուլիսի 24-ին բանտի սպաներից մեկն ընդհատել է աղոթքները և հայտնել երկրորդ դիմողին, որ այսուհետև դրանք արգելվում են: Այդ պատճառով երկրորդ դիմողը հացադուլ է հայտարարել և հրաժարվել որևէ բուժօգնությունից: Միակ բանը, որից նա չէր հրաժարվում, ջուրն էր: Հուլիսի 25-ին նրան նորից հարցաքննել են:

12. Հուլիսի 26-ին երկրորդ դիմողը տեղեկացվել է, որ համաձայն բանտում գործող կանոնների՝ 48 ժամ հացադուլից հետո հացադուլավորները պետք է բժշկական քննություն անցնել: Նա հրաժարվել է՝ հայտարարելով, որ կրնդունի միայն Կիպրոսի Հանրապետությունում կամ, ծայրահեղ դեպքում, ՄԱԿ-ում աշխատող բժշկի ծառայությունը: Դրանից հետո նրանից առգրավել են բոլոր անձնական իրերը, բանալիները, ժամացույցը, գրիչը և խաչը:

13. Հուլիսի 27-ին, նորից սննդից և բուժօգնությունից հրաժարվելուց հետո, երկրորդ դիմողին փակել են 1.5մx2մ մակերեսով մութ, փոքր պատուհանով մի սարսափելի խցում: Պահակը խոստացել է նախորդ խցից տեղափոխել երկրորդ դիմողի անձնական օգտագործման իրերը, այն է՝ սրբիչը և այլն, սակայն այդպես էլ չի բերել: Կեսօրին նրան դուրս են բերել խցից, որպեսզի նա հանդիպի թուրք լրագրողների հետ: Այնուհետև նրան այցելել է ՄԱԿ-ի ներկայացուցիչը, որը հայտնել է, որ երկրորդ դիմողն ազատ կարձակվի օգոստոսի 3-ին:

14. Հուլիսի 28-ին երկու թուրք դատապարտյալներ մտել են խուցը մաքրելու: Նրանք իրենց հետ բերել են հավով, կարտոֆիլով, հացով, սոխով և աղցանով մի սկուտեղ, որը տեղավորել են նրա մահճակալի կողքին գտնվող սեղանին: Երկրորդ դիմողը բանտում անցկացրած երեք գիշերն էլ աթոռին նստած է մնացել, քանի որ ծեծվելուց հետո ստացել էր ողնաշարի վնասվածք: Հեռուստալրագրողների խումբը նկարահանել է սննդամթերքով սկուտեղը:

15. Հուլիսի 29-ին երկրորդ դիմողը ևս մեկ անգամ հրաժարվել է բժշկական քննությունից:

16. Հուլիսի 30-ին երկրորդ դիմողին վերադարձրել են առգրավված անձնական իրերը, խուզարկել են և առավոտյան 11:30-ին ազատ արձակել:

### **Պահապան թիվ 15318/89**

Երրորդ դիմողը՝ 1949թ. ծնված, Կիպրոսի քաղաքացի է: Այժմ նա բնակվում է Նիկոսիայում: Նրան ներկայացնում է Նիկոսիայում գործող փաստաբան պրն Աքիլեաս Դիմիտրադեսը:

Գործի փաստերը, դիմողի ներկայացմամբ, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. 1967թ. հուլիսից 1974թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում երրորդ դիմողի հայրը գնել կամ նվիրատվության կարգով ստացել է Կիպրոսի Կիրենիա շրջանում գտնվող թիվ 4609, 4610, 4618, 4748, 4884, 5002, 5004, 5386 և 5390 հողակտորները, որոնց սեփականատեր է հանդիսացել երրորդ դիմողը. այդ հողակտորները մինչ օրս հանդիսանում են նրա սեփականությունը:

2. Երրորդ դիմողն իր ընտանիքի հետ ապրել և մեծացել է Կիրենիայում: 1972թ. նա ամուսնացել է և իր ամուսնու հետ տեղափոխվել Նիկոսիա: Նա հաճախ էր այցելում իր ընտանիքին և նպատակ ուներ պահպանել հոր տված՝ Կիրենիայի իր սեփականությունը, որպեսզի ապագայում վերադառնա և բնակություն հաստատի այնտեղ: Թիվ 5390 հողակտորի տարածքում արդեն իսկ

սկսվել էր շինարարությունը, և բնակարաններից մեկը նախատեսվում էր երրորդ դիմողի ընտանիքի համար:

3. 1974թ. գավթունը նրան գրկել է իր սեփականություն մուտք գործելու և այն օգտագործելու իրավունքից, ինչպես նաև իր հայրենի քաղաքում ազատ տեղաշարժվելու, իր ընտանիքի և Կիրենիայի այլ բնակիչների հետ ազատ ապրելու իրավունքից:

4. Երրորդ դիմողի ընդվզումն իր հիմնարար իրավունքների շարունակական ոտնահարման և թուրքական զորամասերի կողմից կղզու բաժանման դեմ, ինչպես նաև իր մեծ ցանկությունը՝ տեսնել Կիպրոսի վերամիավորումը և վերադառնալ Կիրենիա՝ իրենց արտահայտումն են գտել «Կանայք վերադառնում են տուն» շարժման խնդիրների և նպատակների մեջ: Նա մասնակցել է բոլոր չորս երթերին, որ 1975թ. գարնանը, 1987թ. հունիսին ու նոյեմբերին և 1989թ. մարտի 19-ին նախաձեռնել էր «Կանայք վերադառնում են տուն» շարժումը: Բոլոր չորս դեպքերում էլ տուն վերադառնալու ճանապարհին նրան կանգնեցրել էին թուրք զինվորները:

5. 1989թ. մարտի 19-ին երրորդ դիմողը, ղեկավարելով երթի՝ մոտավորապես հիսուն մասնակիցներից բաղկացած մի խումբ, շարժվել է դեպի Կիպրոսի թուրքական գրավյալ տարածքում գտնվող Սուրբ Խաչի (Stavros) եկեղեցի: Նրանք բարեհաջող անցել են ՄԱԿ-ի պահակակետը, սակայն այնուհետև անգն թուրք զինվորների մի խումբ փորձել է կանգնեցնել նրանց: Խումբն առաջ է շարժվել, սակայն երբ նրանք հասել են եկեղեցու բակին՝ զինվորների մի խումբ շրջապատել է նրանց, և նրանք այլևս անկարող էին շարունակել դեպի վեր իրենց ճանապարհը:

6. Բոլոր կանայք հանգիստ նստել են և երրորդ դիմողը հորդորել է նրանց իրենց հանգիստ պահել: Մինչ նրանք նստած էին՝ սպիտակ դրոշները ձեռքներին, թուրքական բանակի տեղն աստիճանաբար զբաղեցրել են կիպրոսցի թուրք «ոստիկանները», որոնք զինված էին մահակներով և պաշտպանված՝ վահաններով ու սաղավարտներով:

7. Թուրք զինվորները և, այսպես կոչված՝ ոստիկաններն սկսել են կանանց հրել դեպի բլուրն ի վայր: Երրորդ դիմողին նույնպես ստիպել են իջնել սարից, որտեղ նրան բռնել են երկու «ոստիկան» և քարշ տվել դեպի սարի արևմտյան կողմը: Այնտեղ նա միացել է գետնին նստած մյուս կանանց: Մի թուրք սպա, որը պատասխանատու էր իրավիճակի համար, հարցրել է, թե արդյո՞ք նրանք որևէ բանի կարիք ունեն: ՄԱԿ-ի երկու սպաներ, որոնք նույնպես գտնվում էին այնտեղ, հավաստիացնում էին, որ կանեն ամեն ինչ՝ կանանց ազատելու համար: Մինչ ՄԱԿ-ի, թուրքական բանակի և «ոստիկանության» ներկայացուցիչները բանակցում էին, կանայք գետնին նստած սպասում էին: Բանակցությունները տևել են մոտ երկու ժամ:

8. Վերջ ի վերջո, խումբը բաժանվել է, և երրորդ դիմողին վեց կամ յոթ կանանց հետ, նստեցրել են շտապ օգնության ավտոմեքենան: Նրանց ուղեկցել են կիպրոսցի թուրք երկու կին «ոստիկաններ» և ՄԱԿ-ի մեկ սպա: Նախ մեքենան նրանց տարել է Լուրուջինա կոչվող մի գյուղ, որտեղ բազմաթիվ կիպրոսցի թուրքեր և նորաբնակներ, որոնց կարելի էր ճանաչել իրենց հագուստով, մասնակցում էին ցույցի: Ինչպես երևում էր՝ դա նախապես ծրագրավորված պատասխան ցույց էր: Երթևեկության խցանում առաջանալու պատճառով շտապ օգնության մեքենան ստիպված էր կանգնել, և ցույցի մասնակիցներն սկսել են հարվածել մեքենային և շարժումներով ցույց տալ կանանց, որպեսզի նրանք թողնեն գնան: Մեքենան կանգնել է գյուղի հյուսիսային մուտքի մոտ գտնվող Լուրուջինայի «ոստիկանության» մոտ: Այնտեղ կարելի էր տեսնել, շարքով կանգնած, կապույտ բերետներով զինվորներին: Նրանք չունեին ՄԱԿ-ի կապույտ

կրօքանշաններ, ուստի թուրքական հատուկ ստորաբաժանման (commandos) անդամներն էին:

9. Մեքենան վերադարձել է Նիկոսիա: Լեդրա դղյակի մոտ նրանք սպասել են մոտ երկու ժամ: Մինչև ազատ արձակվելը՝ կանայք հերթով անցել են ՄԱԿ-ի բժշկի բժշկական զննում: Բժիշկը նրանց հարցրել է, թե արդյո՞ք որևէ մեկը վիրավորվել է: Երրորդ դիմողն այդ կապակցությամբ որևէ ասելիք չի ունեցել:

10. Վերջապես, անցնելով Նիկոսիայի միջազգային օդանավակայանով, կանանց բերել են Հանրապետության ազատ գոտի, որտեղ երրորդ դիմողին դիմավորել է իր ընտանիքը: Դա տեղի է ունեցել կեսգիշերին մոտ:

### ***Դիմողների՝ հետազայում ներկայացրած բացատրությունները***

Դիմողները պնդում են, որ իրենց կալանավորումը և վիճարկվող այլ գործողություններն իրականացվել են Կիպրոսի հյուսիսային մասում տեղակայված թուրքական զինված ուժերի կամ նրանց ենթակա այլ ուժերի կողմից:

Ի հաստատումն իրենց բացատրությունների՝ դիմողները ներկայացրել են մի շարք վկայություններ, լուսանկարներ և փաստաթղթեր:

### ***Պատասխանող կառավարության հայտարարությունը՝ զանգատներում վկայակոչված փաստերի վերաբերյալ***

Պատասխանող կառավարությունը հերքում է դիմողների ներկայացրած փաստերը: Կառավարությունը նշում է, որ ենթադրյալ իրադարձությունները կապված են Կիպրոսի հույն իշխանությունների գիտությամբ տեղի ունեցած ցույցի հետ: Ցույցի նպատակը չեզոք գոտու և «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» տարածքի վրա հարձակումն էր: Հարավային Կիպրոսի մամուլում շեշտվել է այդ ցույցի ագրեսիվ բնույթը: Երաշխիքների պայամանագրի համաձայն՝ կղզում տեղակայված թուրքական զինված ուժերը չեն միջամտել 1989թ. հուլիսի 19-ին տեղի ունեցած իրադարձություններին և ոչ մի կապ չունեն դրանց հետ: Ցուցարարների հետ շփում ունեցել են միայն ՄԱԿ-ի զինված ուժերի ներկայացուցիչները և «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» անվտանգության ուժերը:

## **ՓԱՆՓԱՏՆԵՐ**

Առաջին և երկրորդ դիմողները զանգատ են ներկայացրել իրենց կալանավորման, իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի, կալանավորման պայմանների և դրան հաջորդած դատավարության վերաբերյալ: Նրանք վկայակոչել են Կոնվենցիայի 1-ին, 3, 5, 6, 7, 9 և 13 հոդվածների խախտումները:

Երրորդ դիմողը վկայակոչել է Կոնվենցիայի 3-րդ (նվաստացնող վերաբերմունք) և 5-րդ հոդվածների խախտումը, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտումները: Վեց ամսվա կանոնի կապակցությամբ (Կոնվենցիայի 26-րդ հոդված)՝ նա հայտարարել է, որ 1989թ. մարտի 19-ին խախտվել է 8-րդ հոդվածը և, որ զրկելով դիմողին իր սեփականություն հանդիսացող տարածքը մուտք գործելու իրավունքից՝ Թուրքիան աստիճանաբար, 16 տարիների ընթացքում, ազդել է իր՝ դիմողի, որպես սեփականատիրոջ, իրավունքների վրա և, մասնավորապես, իր սեփականությունը անարգել օգտագործելու իրավունքի վրա՝ այդպիսով թույլ տալով 1-ին հոդվածի շարունակական խախտում (1990թ. դեկտեմբերի 18-ին ներկայացված բացատրությունների 23և 24-րդ կետեր):

## II. Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի հայտարարությունը

1. 1987թ. հունվարի 28-ին Թուրքիայի կառավարությունը Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին է հանձնել հետևյալ հայտարարությունը.

«Թուրքիայի կառավարությունը, գործելով Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 25-րդ հոդվածի (1) համաձայն, սույնով հայտարարում է, որ ճանաչում է Սարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն հետևյալ գանգատներն ընդունելու իրավազորությունը՝ հետևյալ պայմաններով.

(i) գանգատներ ներկայացնելու իրավունքը տարածվում է միայն այն ենթադրյալ գործողությունների կամ անգործության վրա, որոնք կատարվել են Թուրքիայում պետական իշխանությունների կողմից՝ այն տարածքի սահմաններում, որի նկատմամբ կիրառելի է Թուրքիայի Հանրապետության Սահմանադրությունը,

(ii) այն հանգամանքները և պայմանները, որոնցից դրված Թուրքիան Կոնվենցիայի 15-րդ հոդվածի հիման վրա՝ հատուկ հանգամանքների դեպքում շեղվում է իր պարտավորություններից, պետք է մեկնաբանվեն այս հայտարարությամբ Հանձնաժողովին տրվող իրավազորության նպատակի համար, Թուրքիայի Սահմանադրության 119 և 122-րդ հոդվածների լույսի ներքո,

(iii) սույն հայտարարությամբ Հանձնաժողովին տրվող իրավազորությունը չպետք է տարածվի զինվորական անձնակազմի իրավական կարգավիճակին և, հատկապես, զինված ուժերի կարգապահության համակարգին վերաբերող հարցերի վրա,

(iv) սույն հայտարարությամբ Հանձնաժողովին տրվող իրավազորության նպատակի համար՝ Կոնվենցիայի 8, 9, 10 և 11-րդ հոդվածների 2-րդ կետերում «ժողովրդավարական հասարակություն» հասկացությունը պետք է հասկացվի Թուրքիայի Սահմանադրության և հատկապես դրա Նախաբանի և 13-րդ հոդվածի հիմնարար սկզբունքներին համապատասխան,

(v) սույն հայտարարությամբ Հանձնաժողովին տրվող իրավասության նպատակով՝ Սահմանադրության 33, 52 և 135-րդ հոդվածները պետք է համարվեն համաձայնեցված Կոնվենցիայի 10 և 11-րդ հոդվածների հետ:

Սույն հայտարարությունը տարածվում է այն վիճարկվող խախտումների վրա, որոնք վերաբերում են այն փաստերին, ներառյալ այդ փաստերի հիման վրա ընդունված վճիռները, որոնք տեղի են ունեցել տվյալ հայտարարությունն ի պահ հանձնելու ամսաթվից հետո: Սույն հայտարարությունն ուժի մեջ է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում» :

2. 1987թ. հունվարի 29-ին Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը նշյալ հայտարարությունը փոխանցել է Կոնվենցիայի անդամ Բարձր պայմանավորվող կողմերին ավելացնելով.

«Երբ այս հայտարարությունը հանձնվել է ինձ, ես թուրքական իշխանությունների ուշադրությունը հրավիրել եմ այն փաստի վրա, որ Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածի հիման վրա արված այս ծանուցումը ոչ մի դեպքում չի կանխորոշում իրավունքի այն հարցերը, որոնք կարող են բարձրացվել տվյալ հայտարարության վավերականության կապակցությամբ»:

3. Գլխավոր քարտուղարին ուղղված 1987թ փետրվարի 5-ի իր նամակում Թուրքիայի մշտական ներկայացուցիչը նշել է.

«...»

Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածի ոչ երկինաստ, պարզ շարադրանքն իրավունք չի տալիս Ձեզ՝ որպես ավանդապահ, Ձեր պարտականությունները կատարելիս՝ Թուրքիայի հայտարարության օրինակները Բարձր պայմանավորվող կողմերին փոխանցելու ընթացքում կատարել հավելումներ կամ մեկնաբանություններ:

Համաձայն Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածի՝ Գլխավոր քարտուղարը, որպես ավանդապահ, 25-րդ հոդվածի հիման վրա որևէ հայտարարություն ընդունելուց հետո պետք է «հայտարարության օրինակները փոխանցի Բարձր պայմանավորվող կողմերին և դրանք հրատարակի»:

Միջազգային պայմանագրային պրակտիկան, և մասնավորապես, այն պրակտիկան, որին հետևել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը՝ որպես, նմանատիպ կարևորության պայմանագրերի, ինչպես օրինակ՝ Միջազգային արդարադատության դատարանի կանոնադրության կամ մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին վերաբերող կոնվենցիաների և պայմանագրերի ավանդապահ, նույնպես հաստատում է, որ ավանդապահը պետք է խուսափի Պայմանավորվող կողմի հայտարարության էության վերաբերյալ որևէ մեկնաբանություններ անելուց:

...»

4. 1987թ. փետրվարի 10-ի իր պատասխանում Գլխավոր քարտուղարը, հաշվի առնելով հունվարի 29-ի իր նամակը, հայտարարում է.

«...»

Ես գտնում եմ, որ այս գործելաձևը համապատասխանում է միջազգային պայմանագրերի իրավունքին և համապատասխան պրակտիկային, ինչպես բազմիցս ապացուցվել է մի շարք նախադեպերով, ներառյալ՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի, որպես ավանդապահի, փորձով,....:

... Պայմանագրերի իրավունքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի 77-րդ (2) հոդվածով նախատեսված է հետևյալը.

«Որևէ պետության և ավանդապահի միջև՝ վերջինիս դերի կապակցությամբ տարածայնությունների ծագելու դեպքում ավանդապահին այդ հարցի մասին տեղյակ է պահում պայմանագիրն ստորագրող պետություններին, պայմանավորված պետություններին կամ համապատասխան դեպքերում՝ շահագրգիռ միջազգային կազմակերպության իրավասու մարմնին»:

Հետևաբար, իմ պարտքն է, Պայմանավորվող կողմերի ուշադրությունը հրավիրել այն հարցի վրա, որի վերաբերյալ Կառավարության և իմ միջև կան տարակարծություններ՝ այն է՝ իմ, որպես ավանդապահի, պարտականությունների կատարման հարցի վերաբերյալ»:

5. 1987թ. մարտի 13-ին Թուրքիայի մշտական ներկայացուցիչը պատասխանել է. «...»

Նախ և առաջ, կցանկանայի նշել, որ Թուրքիայի հայտարարությունը չի ներառում որևէ «վերապահում»՝ միջազգային պայմանագրերի իրավունքի իմաստով:... Այդ իսկ պատճառով «վերապահումներ» տերմինը, որը նշվում էր Ձեր նամակում,

զուտ Ձեր սուբյեկտիվ մեկնաբանության և կիրառման արդյունք է, ինչից պետք է խուսափած լինեիք՝ ելնելով Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածով պարզորոշ սահմանված՝ ավանդապահի սահմանափակ գործառույթներից...

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը, որը ենթարկվում է 1952թ. հունվարի 12-ին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 598-րդ (VI) բանաձևին, երբևէ չի հրաժարվել զրանցել այն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերի ներկայացրած որևէ հայտարարություն կամ ծանուցում, որի ավանդապահ է եղել ինքը, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի ծանուցումների կամ հայտարարությունների մասին տեղեկացնելիս երբեք չի արել քննադատական բնույթի մեկնաբանություններ:

...»

6. 1987թ. ապրիլի 6-ին Յունաստանի արտաքին գործերի փոխնախարարը Գլխավոր քարտուղարին է հղել հետևյալ նամակը.

«...

Թուրքիայի կառավարությունը, հեռանալով այն պրակտիկայից, որին մինչ այժմ հետևել են բոլոր պետությունները՝ վերոնշյալ դրույթի հիման վրա հայտարարություններ անելիս, կարծում է, որ կարող է զգալիորեն սահմանափակել իր կոնվենցիոնալ պարտավորությունները՝ կատարելով մի շարք վերապահումներ... Չնայած այն փաստին, որ Թուրքիայի կառավարությունն իր հայտարարության մեջ ակնհայտորեն չի օգտագործել վերապահումներ տերմինը,... կարևոր է,... ոչ թե քննարկվող փաստաթղթում տերմինի առկայությունը կամ դրա բացակայությունը, այլ բուն բովանդակությունը և այն ազդեցությունը, որ այն կարող է ունենալ: Յանապատասխանաբար, որևէ միակողմ հայտարարություն, որը սահմանափակում է պետության պայմանագրային պարտավորությունները, միջազգային իրավունքի տեսանկյունից, անվիճարկելիորեն, հանդիսանում է վերապահում: Այս հարցն անմիջականորեն կապված է միջազգային պայմանագրերի իրավունքի ամենահիմնարար սկզբունքներից մեկի հետ, որը կողիֆիկացվել է Վիեննայի երկու կոնվենցիաներով՝ Պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. կոնվենցիայով և Պետությունների ու միջազգային կազմակերպությունների, կամ միջազգային կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրերի իրավունքի մասին 1986թ. կոնվենցիայով: Երկու կոնվենցիաներն էլ միանման ձևակերպումներով սահմանում են, որ՝ «վերապահում» արտահայտությունը նշանակում է միակողմ հայտարարություն՝ անկախ դրա ձևակերպումից, որն արվում է պետության կողմից պայմանագրի կնքման, վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու ժամանակ, որով այն նպատակ է հետապնդում բացառել կամ փոփոխել պայմանագրի որոշ դրույթների իրավական ազդեցությունն այդ պետության նկատմամբ կիրառվելու դեպքում» (2-րդ հոդված, կետ 1(դ)):

Այսպիսով, ակնհայտ է, որ Թուրքիայի կառավարության վերոնշյալ հայտարարության մեջ նշվող սահմանափակումները միջազգային իրավունքի տեսանկյունից հանդիսանում են վերապահումներ: Ավելին, սա պարզորոշ երևում է Թուրքիայի հայտարարության մեջ արված՝ «պայմաններ» արտահայտությունից:

Այսպիսով, հարց է առաջանում, թե արդյո՞ք այդ վերապահումները համատեղելի են Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի հետ: Մեր կարծիքով, դրանք, անշուշտ, համատեղելի չեն, մասնավորապես հետևյալ պատճառներով.

Վերապահումների հարցը խստորեն կարգավորվում է Կոնվենցիայի 64-րդ հոդվածով...

Ինքնին պարզ է, որ Թուրքիայի վերապահումները հեռու են այս հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանելուց, քանի որ դրանք համատեղելի չեն ոչ ժամանակին վերաբերող պահանջների, ոչ էլ հոդվածում ամրագրված հիմնական պայմանների հետ:

Անհերքելի է այն, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առնչությամբ վերապահումները պետք է ձևակերպվեն միայն 64-րդ հոդվածի դրույթների հիման վրա: Այս եզրակացությունը բխում է ոչ միայն հենց նույն 64-րդ հոդվածից, որը վերապահումները կանոնակարգող միակ հոդվածն է, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ամբողջական կառուցվածքից և էությունից, ինչպես նաև վերապահումների մասին միջազգային իրավունքով սահմանված հիմնական սկզբունքներից: Ավելին, 25-րդ հոդվածը չի տալիս որևէ ակնհայտ կամ թաքնված հիմքեր Թուրքիայի հայտարարության մեջ տեղ գտած վերապահումների նման վերապահումներ կատարելու համար: Վերաբերմունքը չի կարող լինել այլ, եթե վերապահումները հնարավոր լինել կատարել 25-րդ հոդվածի հիման վրա. գործընթացի նման մեթոդը կսասանի 64-րդ հոդվածի հիմքերը, և վաղ թե ուշ կքանդի Կոնվենցիայի հիմքերը:

Պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածի (բ) կետում, որում հռչակվում է անհերքելի իրավական տրամաբանության սկզբունքը, մասնավորապես սահմանված է, որ. «պայմանագիր կնքելիս, վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ դրան միանալիս՝ Պետությունը կարող է ձևակերպել վերապահում, այն դեպքում, երբ. բ) պայմանագրով նախատեսվում է, որ կարելի է անել որոշակի վերապահումներ, որոնց մեջ տվյալ վերապահումը չի

մտնում» (տես՝ նաև Պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 19 (բ) հոդվածը):

Սրանից հետևում է, որ Թուրքիայի վերապահումները, լինելով 64-րդ հոդվածի շրջանակից դուրս, Կոնվենցիայի համաձայն պետք է համարվեն անթույլատրելի վերապահումներ և, հետևաբար՝ անօրինական վերապահումներ: Հետևաբար, դրանք առաջինը են և չեն կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

Ավարտելով, ցանկանում ենք ընդօգնել, թե որքան ցավալի է, որ եվրոպական հասարակական կարգին առնչվող այս բացառիկ կարևորության հարցում Դուք դեռևս ամբողջովին չեք գործադրել ընդհանուր միջազգային իրավունքից և, մասնավորապես, 1969 և 1986թթ. Վիեննայի կոնվենցիաներից (տես՝ 77-րդ հոդվածի կետ 1 (դ) և կետ

2-րդ՝ համապատասխանաբար) բխող՝ ավանդապահի Ձեր լիազորությունները, հատկապես, որ ի լրումն Ձեր՝ ավանդապահի պարտականությունների, Դուք հանդիսանում եք նաև այն մարմիններից մեկը, որը պետք է վերահսկի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ճշգրիտ կիրառումը (57-րդ հոդված):

7. 1987թ. ապրիլի 27-ին Գլխավոր քարտուղարը պատասխանել է.  
« Անդրադառնալով այն դիտողություններին... որոնք վերաբերում են Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի համաձայն իմ՝ որպես ավանդապահի, պարտականություններին, ես կցանկանայի հիշեցնել, որ երբ թուրքական իշխանություններն ինձ հանձնեցին հայտարարությունը, ես իմ պարտքը համարեցի պայման դնել, որ Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածի հիման վրա ներկայացված հայտարարությունը ոչ մի կերպ չի կարող կանխորոշել տվյալ հայտարարության վավերականության վերաբերյալ հնարավոր իրավական հարցերը:

Ավելին, 1987թ. փետրվարի 10-ի նամակում, վկայակոչելով Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 77-րդ (2) հոդվածը, ես Պայմանավորվող կողմերի ուշադրությունը հրավիրեցի Թուրքիայի կառավարության և իմ միջև առաջացած տարաձայնության վրա՝ կապված վերոնշյալ իմ պարտականությունների կատարման հետ: Այսպիսով, ես համարում եմ, որ իմ գործողությունները համապատասխանել են իրավունքին և

պայմանագրային ու միջազգային կազմակերպությունների պրակտիկային, ինչը մասնավորապես բխել է 1969թ. Վիեննայի կոնվենցիայից»:

8. Շվեդիայի մշտական ներկայացուցիչն իր՝ 1987թ. ապրիլի 21-ի նամակում այսպես է պատասխանել Գլխավոր քարտուղարի 1987թ. հունվարի 29-ի նամակին, որով վերջինս փոխանցում էր 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված՝ Թուրքիայի հայտարարությունը.

«...»

Շվեդիայի կառավարությունը համարում է, որ այս հայտարարությունը կարևոր քայլ է Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության ճանապարհին: Սակայն Թուրքիայի այն հայտարարությունները և վերապահումները, որոնք կապված են վերոնշյալ ճանաչման հետ, բարձրացնում են մի շարք իրավական հարցեր՝ կապված այդ ճանաչման շրջանակների հետ: Այդ իսկ պատճառով Կառավարությունն իրեն իրավունք է վերապահում անդրադառնալու այս հարցին Եվրոպայի խորհրդի իրավասու մարմինների այնպիսի որոշումների լույսի ներքո, որոնք կարող են կայացվել կոնկրետ անձանց ներկայացրած գանգատների վերաբերյալ»:

9. Լյուքսեմբուրգի արտաքին գործերի նախարարն իր 1987թ. ապրիլի 21-ի նամակում այսպես է պատասխանել Գլխավոր քարտուղարի՝ 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի հայտարարության հետ կապված ծանուցմանը.

«...»

Հայտարարության մեջ տեղ գտած վերապահումները, որոնք սահմանափակում են Թուրքիայի կառավարության կողմից Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ անհատական գանգատներ ընդունելու իրավասության ճանաչումը, առաջ են քաշում հիմնարար հարց՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում կիրառվող իրավական փաստաթղթերի գործադրման շրջանակների վերաբերյալ: Հարցը կայանում է նրանում, *inter alia*, արդյո՞ք միջազգային կոնվենցիայի ճանաչման սահմանափակման միակողմանի արտահայտությունը վավերական է, թե՞ ոչ:

...Լյուքսեմբուրգն իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում և Եվրոպայի խորհրդի իրավասու մարմինների առջև արտահայտելու իր դիրքորոշումը Թուրքիայի կառավարության հայտարարության առնչությամբ: Երբևէ, այս խնդրի էության վերաբերյալ պաշտոնական արձագանքի բացակայությունը չպետք է մեկնաբանվի որպես Լյուքսեմբուրգի կողմից Թուրքիայի վերապահումների լռելյայն ճանաչում»:

10. Դանիայի մշտական ներկայացուցիչը Թուրքիայի հայտարարության վերաբերյալ Գլխավոր քարտուղարին ուղղված իր՝ 1987թ. ապրիլի 30-ի նամակում հայտնում է.

«...»

Ըստ Դանիայի կառավարության՝ նշված ճանաչմանը վերաբերող հայտարարություններից և վերապահումներից բխում են մի շարք իրավական

հարցեր՝ կապված այդ ճանաչման շրջանակների հետ: Այդ իսկ պատճառով Կառավարությունն իրեն իրավունք է վերապահում այս հարցին անդրադառնալու Եվրոպայի խորհրդի իրավասու մարմինների ապագա որոշումների լույսի ներքո, որոնք կկայացվեն կոնկրետ անձանց ներկայացրած գանգատների վերաբերյալ»:

11. Նորվեգիայի մշտական ներկայացուցիչը Գլխավոր քարտուղարին ուղղված իր՝ 1987թ. մայիսի 4-ի նամակում հայտարարում է.

«...»

Նորվեգիայի կառավարության կարծիքով Թուրքիայի կառավարության կատարած քայլը ողջունելի է, քանի որ դա կարևոր ներդրում է Եվրոպայում մարդու իրավունքների ամրապնդման գործընթացի մեջ: Սակայն, հայտարարության շարադրումը տեղիք է տալիս գանգատներ ներկայացնելու իրավունքի ճանաչման շրջանակի վերաբերյալ բարդ մեկնաբանությունների: Նմանատիպ դեպքերում այսպիսի հարցերը լուծվում են Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից առանձին անհատների ներկայացրած գանգատների վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Անհատական գանգատներ ներկայացնելու իրավունքը, որը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 25-րդ հոդվածի վրա, հանդիսանում է Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության դատավարական համակարգի կարևոր մասը: Ուստի, ցանկալի է խուսափել որևէ կասկածից՝ առանձին պետությունների կողմից այս իրավունքի ճանաչման շրջանակների և այդ ճանաչման վավերականության վերաբերյալ, ինչը կարող է առաջանալ գանգատների ընդունելիության համատեքստի վերաբերյալ ներկայացվող ընդհանրացված վերապահումների, մեկնաբանության ենթակա հայտարարությունների և պայմանների առաջաջման պարագայում»:

12. Թուրքիայի մշտական ներկայացուցիչը՝ ի պատասխան Հունաստանի, Շվեդիայի, Լյուքսեմբուրգի, Դանիայի և Նորվեգիայի նամակների Գլխավոր քարտուղարին ուղղված իր՝ 1987թ. հունիսի 26-ի նամակում մասնավորապես հայտնել է.

« Նախ և առաջ, ես կցանկանայի նշել, որ Թուրքիայի հայտարարության մեջ տեղ գտած կետերը միջազգային պայմանագրերի իրավունքի տեսանկյունից չեն կարող դիտվել որպես «վերապահումներ»: Համաձայն 1969թ. Պայմանագրերի

իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի, որի դրույթների մեծ մասը նպատակ ունի կողիֆիկացնել միջազգային պայմանագրերի իրավունքում գոյություն ունեցող սկզբունքները՝ «վերապահումը՝ վերապահումը կատարող պետության համար պայմանագրի դրույթները փոփոխում է վերապահման ծավալով»:

Այստեղից հետևում է, որ վերապահումը պետք է՝ այն ներկայացնող պետության համար էապես վերափոխի պայմանագրով նախատեսված պարտավորությունների շրջանակը:

1954թ. Թուրքիան վավերացրել է Կոնվենցիան և դրան կից 1-ին արձանագրությունը՝ վերապահումներ անելով դրա 2-րդ հոդվածի վերաբերյալ:

Սակայն 1987թ. հունվարի 28-ի՝ Թուրքիայի հայտարարության մեջ տեղ գտած «պայմանները» չեն կարող համարվել Կոնվենցիայից բխող պարտավորությունների առնչությամբ «վերապահումներ»: Դրանք չեն փոփոխում Կոնվենցիայով նախատեսված Թուրքիայի ընդհանուր պարտավորությունները: Կոնվենցիան, 1954 թ. վավերացվելով և «վերապահումների» ենթարկվելով, շարունակում է Թուրքիայի համար պարտադիր լինել ողջ ծավալով և ... համաձայն 24-րդ հոդվածի՝ բաց է լրացուցիչ հայտարարությունների համար:

Այլ կերպ ասած, 1987թ. հունվարի 28-ի հայտարարության մեջ տեղ գտած պայմանները չեն ենթադրում Կոնվենցիայի որևէ իրավական դրույթի փոփոխում կամ բացառում: «Պայմանների» միակ նպատակն է սահմանել և սահմանափակել այն հավելյալ լիազորությունները և իրավասությունը, որ Թուրքիան՝ որպես Պայմանավորվող կողմ, իր իսկ կամքով վերապահել է Հանձնաժողովին:

Ավելին, միջազգային պայմանագրի որևէ կամքնտիր հոդվածի ընդունումը հավասարազոր է համապատասխան պետության կողմից այդ դրույթին ենթարկվելու համաձայնությանը: Այդպիսով, դա հիմնված է տվյալ պետության սուբյեկտիվ վերաբերմունքի և ընկալման վրա: Սա նշանակում է, որ համապատասխան միջազգային պայմանագրի կամ կոնվենցիայի նորմերի սահմաններում պետությունն ազատ է նմանատիպ հոդվածներին ենթարկվելու իր համաձայնությունը որակելու մեջ:

Ճանաչելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 25-րդ հոդվածով սահմանված՝ անհատական գանգատներ ներկայացնելու իրավունքը՝ պետությունները Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին տալիս են հավելյալ իրավասություն: Այսպիսի իրավասություն տալը կարող է ենթարկվել որոշակի պայմանների:

Կոնվենցիայի 25-րդ հոդվածը չի մատնանշում ո՛չ որևէ հնարավոր պայման, ո՛չ էլ այդ պայմանների արգելք: Մասնավորապես, հոդվածը չի ամրագրում ո՛չ որակյալ հայտարարություն, ո՛չ էլ այդպիսի հայտարարության արգելք: Այսպիսով, 25-րդ հոդվածի հիման վրա որոշակի պայմաններով հայտարարությունը չի կարող համարվել Կոնվենցիայի ակնհայտ նորմին հակասող:

Վերջապես, կցանկանայի նշել, որ միակ մարմինը, որն իրավասու է այս հարցին որևէ իրավական ուժ ունեցող գնահատական տալու, դա Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն է, երբ ստիպված կլինի այդ անել որևէ անհատական զանգատի կապակցությամբ, ինչպես նաև Նախարարների կոմիտեն՝ գործելով Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն»:

13. 1987թ. հուլիսի 22-ին Բելգիայի մշտական ներկայացուցիչը Գլխավոր քարտուղարին ուղղված իր նամակում այսպես է արտահայտվել 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի ներկայացրած հայտարարության կապակցությամբ.

«...»

Բելգիայի կառավարությունը համարում է, որ այս հայտարարությունը մի կարևոր քայլ է Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության ճանապարհին: Սակայն այս հայտարարությունում տեղ գտած պայմանները և որակումները, որոնք կոչված են սահմանափակելու Թուրքիայի կառավարության կողմից եվրոպական հանձնաժողովի՝ անհատական զանգատներ ընդունելու իրավասության ճանաչումը, բարձրացնում են իրավական հարցեր՝ Կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համակարգի հիմնարար դրույթներից մեկի շրջանակների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով Բելգիան իրեն իրավունք է վերապահում Թուրքիայի կառավարության հայտարարության կապակցությամբ իր դիրքորոշումն արտահայտել ավելի ուշ և եվրոպայի խորհրդի իրավասու մարմինների առջև: Միաժամանակ, խնդրի էության վերաբերյալ պաշտոնական արձագանքի բացակայությունը ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվի որպես Բելգիայի կողմից Թուրքիայի կառավարության պայմաններին և որակումներին լռելյայն համաձայնություն»:

#### **Վարույթը Չանձնաժողովում**

Թիվ 15299/89 և 15300/89 զանգատները ներկայացվել են 1989 թ. հուլիսի 21-ին և գրանցվել՝ 1989թ. հուլիսի 31-ին: Թիվ 15318/89 զանգատը ներկայացվել է 1989թ. հուլիսի 22-ին և գրանցվել՝ 1989թ. հուլիսի 31-ին:

1989թ. օգոստոսի 8-ին առաջին և երկրորդ դիմողների փաստաբանը Դատարանին տեղեկացրել է, որ այս դիմողներն ազատ են արձակվել: 1989թ. օգոստոսի 28-ին նա ներկայացրել է լրացուցիչ բացատրություններ:

1989թ. նոյեմբերի 9-ին Չանձնաժողովը որոշել է միավորել զանգատները և դրանք ներկայացնել պատասխանող Կառավարության ուշադրությանը, և

այնուհետև հրավիրել Կառավարությանը ներկայացնելու գանգատների էության և ընդունելիության վերաբերյալ իր բացատրությունները:  
Պատասխանող Կառավարության բացատրությունները ներկայացվել են 1989թ. օգոստոսի 28-ին՝ ժամկետի երկարաձգումից հետո:  
1990թ. մայիսի 6-ին (գանգատներ թիվ 15299/89 և 15300/89) և 11-ին (գանգատ թիվ 15318/89) ժամկետի երկարաձգումից հետո դիմողը, ի պատասխան Կառավարության բացատրությունների, ներկայացրել է իր բացատրությունները:  
Հանձնաժողովը կրկին քննարկել է գանգատները՝ 1989թ. օգոստոսի 5-ին, և որոշել է կողմերին հրավիրել գանգատների ընդունելիության և էության վերաբերյալ դատական լսումների:  
1990թ. դեկտեմբերի 18-ին դիմողները ներկայացրել են հավելյալ գրավոր բացատրություններ:

Նիստը տեղի է ունեցել Ստրասբուրգում՝ 1991թ. հունվարի 11-ին: Դատարանում կողմերին ներկայացրել են.

*Կառավարությունը՝*

պրոֆեսոր Սուատ Բիլգե, ներկայացուցիչ,  
պրոֆեսոր Չերբերթ Գոլսոնգ, փաստաբան,  
պրոֆեսոր Էլիե Լաուտեռպախտ, փաստաբան,  
Մյունչի Օզմեն, Արտաքին գործերի նախարարության փորձագետ,  
դկտ. դենիզ Ակչայ, Արտաքին գործերի նախարարության փորձագետ,  
Դանիել Բեթլեհեն, փաստաբան, փորձագետ.

*դիմողներին՝*

առաջին և երկրորդ դիմողներին՝  
դկտ. Կիպրոս Քրիստոտոմիդես, պաշտպան, Նիկոսիա,  
Քրիստալլա Պիտսիլի, փաստաբան, Նիկոսիա.

*երրորդ դիմողին՝*

Աքիլլես Դեմետրիադես, փաստաբան, Նիկոսիա,  
Ջոաննա Լոիզիդու, փաստաբան, Նիկոսիա.

առաջին, երկրորդ և երրորդ դիմողների անունից՝  
պրոֆեսոր Յան Բրաունլի Բ.Ս., փաստաբան:

Առաջին, երկրորդ և երրորդ դիմողները նույնպես ներկա էին:

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ**

1. Հանձնաժողովի իրավասությունը Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա կատարված Թուրքիայի հայտարարության առնչությամբ
1. Կոնվենցիայի 25-րդ հոդվածը սահմանում է.

1. «Հանձնաժողովը կարող է ստանալ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված գանգատներ որևէ անհատի, հասարակական կազմակերպության կամ անձանց խմբի կողմից, որոնք հայտարարում են, որ Բարձր պայմանավորվող կողմը խախտել է Կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքները, այն դեպքում, եթե այն Բարձր պայմանավորվող կողմը, որի դեմ գանգատ է ներկայացվել, հայտարարել է, որ ճանաչում է Դատարանի՝

նմանատիպ գանգատներ ընդունելու իրավասությունը: Այն Բարձր պայմանավորվող կողմերը, որոնք արել են նման հայտարարություն, պարտավորվում են չխոչընդոտել այս իրավունքի արդյունավետ իրականացմանը:

2. Նման հայտարարությունները կարող են արվել որոշակի ժամանակահատվածի համար:

3. Հայտարարությունները պետք է հանձնվեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը հրատարակում է դրանք և պատճենները փոխանցում Բարձր պայմանավորվող կողմերին:

4. Հանձնաժողովը սույն հոդվածով նախատեսված իր լիազորությունները իրականացնում է միայն այն դեպքում, երբ նվազագույնը վեց Բարձր պայմանավորվող կողմ, նախորդ կետերին համապատասխան, կատարել է հայտարարություններ»:

2. Թուրքիան ճանաչել է Հանձնաժողովի իրավասությունը 1987թ. հունվարի 28-ին՝ 25-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ:

3. Դիմողները հայտարարում են, որ Թուրքիան «բուֆերային գոտում» և Կիպրոսի հյուսիսային շրջանում խախտել է Կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքները: Պատասխանող Կառավարությունը, վկայակոչելով 1987թ. հունվարի 28-ի իր հայտարարության կետ 1-ը՝ տարածքային սահմանափակման մասին, հայտարարում է, որ Թուրքիան չի ճանաչել Հանձնաժողովի իրավասությունը տվյալ գանգատները քննելու համար, քանի որ դրանք դուրս են այն տարածքի շրջանակից, որը նշվել էր հայտարարությունում: Դիմողները վիճարկում են այս տարածքային սահմանափակման վավերականությունը և դրա կիրառումը տվյալ գործի նկատմամբ: Պատասխանող Կառավարությունը հայտարարում է, որ հայտարարությունը ենթադրում է մեկ ամբողջություն, և որ դրանում նշված որևէ պայմանի մերժումը հերքում է ամբողջ հայտարարությունը:

4. Նախ և առաջ Հանձնաժողովը պետք է որոշի Թուրքիայի հայտարարության վավերականությունը և դրա շրջանակները: Հանձնաժողովի այս իրավասությունն ակնհայտորեն ճանաչվել է Թուրքիայի կողմից ավելի վաղ նամակագրության (Գլխավոր քարտուղարին ուղղված՝ 1987թ. հունիսի 26-ի նամակը) և Հանձնաժողովում լսումների ժամանակ: Բացի դրանից, երբ 1987թ. հունվարի 28-ին Թուրքիան հանձնել է իր հայտարարությունը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Թուրքիայի ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրել է առ այն, որ մյուս Բարձր պայմանավորվող կողմերին ուղղված հայտարարության ծանուցումը «ոչ մի կերպ չի կանխորոշում այն իրավական հարցերը, որոնք կարող են բարձրացվել նշված հայտարարության վավերականության վերաբերյալ»:

ա) Թուրքիայի հայտարարության (i) կետում տեղ գտած տարածքային սահմանափակման իմաստը

5. Տարածքային սահմանափակման շրջանակի կապակցությամբ դիմողները հայտարարում են, որ ողջամիտ մեկնաբանության դեպքում այս սահմանափակումը չի գործում ի նպաստ Թուրքիայի, քանի որ Թուրքիայի Սահմանադրությունը պետք է կիրառվի երկրի զինված ուժերի և այդ զինված ուժերի տեղակայման ու օգտագործման վերաբերյալ Կառավարության որոշումների նկատմամբ: Նրանք նշում են, որ Թուրքիան փոփոխություն է մտցրել իր 1987թ. հայտարարության մեջ «նորովի շարադրված բառերով»:

6. Հանձնաժողովը գտնում է, որ 1987թ. հայտարարության մեջ տեղ գտած «Թուրքիայում պետական մարմինների գործողություններ և անգործություն»

արտահայտությունն ակնհայտորեն վերաբերում է մետրոպոլիայի տարածքում կատարվող գործողություններին: Սակայն «այն տարածքի սահմաններում, որի նկատմամբ կիրառելի է թուրքական Սահմանադրությունը» արտահայտությունը կարող է նաև ներառել Թուրքիայի պետական մարմինների այն գործողությունները, որոնք կատարվում են Թուրքիայի մետրոպոլիայից դուրս այն շրջաններում, ուր կիրառելի է Թուրքիայի Սահմանադրությունը: Հանձնաժողովը նշում է, որ այս վերջին արտահայտությունը Թուրքիայի 1990թ. մարտի 7-ի հայտարարության մեջ փոխարինվել է «Թուրքիայի Հանրապետության պետական սահմանների շրջանակում» արտահայտությամբ:

7. Հանձնաժողովը գտնում է, որ Թուրքիայի՝ 1987թ. հունվարի 28-ի հայտարարության մեջ տեղ գտած տարածքային սահմանափակման պայմանը պետք է մեկնաբանվի՝ ելնելով դրա հիմնական նպատակից և մտադրությունից, հաշվի առնելով նախկինում Կիպրոսի կողմից Թուրքիայի դեմ ներկայացված ներպետական գործերը: Մինչ այդ դիմողները հայտարարել էին «Հայտնի է, որ այս սահմանափակումը նպատակ ունի ազատելու Թուրքիային այն պատասխանատվությունից, որ նա պետք է կրի իր կողմից զավթված Կիպրոսի շրջանում կատարած գործողությունների արդյունքում Եվրոպական կոնվենցիայի խախտումների համար»:

8. Հիմնվելով վերոնշյալ մեկնաբանության վրա՝ Հանձնաժողովը գտնում է, որ այն իրադարձությունները, որոնց կապակցությամբ ներկայացվել են գանգատները, Թուրքիայի՝ 1987թ. հունվարի 28-ի հայտարարության մեջ տեղ գտած տարածքային սահմանափակման շրջանակում են: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովը պետք է որոշի, թե արդյոք իր իրավագործությունը սահմանափակվում է այս դրույթով:

բ) Թուրքիայի հայտարարության (i) և (v) կետերում տեղ գտած սահմանափակումների վավերականությունը

9. Բացի վերջին կետի առաջին նախադասությամբ արտահայտված ժամանակային սահմանափակումից, 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված՝ Թուրքիայի հայտարարությունը կետեր (i)- (v)-ում պարունակում է ևս հինգ սահմանափակող դրույթ: Նախկինում առանձին անձանց կողմից Թուրքիայի դեմ ներկայացված գանգատները քննելիս՝ Հանձնաժողովն ստիպված չի եղել որոշել այս հինգ սահմանափակումներից որևէ մեկի վավերականությունը, քանի որ դրանք չեն վկայակոչվել: Սակայն թիվ 14116/88 և 14117/88 գանգատները (Սարյինը և Յագչին ընդդեմ Թուրքիայի, դեկտեմբեր 11.5.89, *Revue universelle des Droits de l'homme* 1989, էջ 516, նաև հրատարակվելու է Որոշումներում և Ձեկույցներում) ընդունելիս՝ Հանձնաժողովը հիմնվել է Թուրքիայի վավերական հայտարարության վրա, որով Թուրքիան ճանաչում էր անհատների՝ գանգատներ ներկայացնելու իրավունքը:

10. Հանձնաժողովը նշում է, որ այս «պայմանները» սահմանված են առանձին և իրենց բնույթով տարբերվում են 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված՝ Թուրքիայի հայտարարության վերջին կետում տեղ գտած ժամկետային սահմանափակումից: Հանձնաժողովը հիշեցնում է, որ ժամկետային սահմանափակումները թույլատրելի են 25-րդ հոդվածի 2-րդ կետով, որը նախատեսում է, որ 1-ին կետի հիման վրա ներկայացվող հայտարարությունները «կարող են կատարվել որոշակի ժամկետի համար»: Այս հոդվածը միշտ հասկացվել է որպես թույլտվություն Բարձր պայմանավորվող կողմերին՝ բացառելու 25-րդ հոդվածի հիման վրա արվող հայտարարություններին:

հետադարձ ուժ հաղորդելը (տե՛ս 1966թ հունվարի 14-ի Միացյալ Թագավորության (Տարեգիրք 9, էջ 8), 1973թ. հունիսի 20-ի Իտալիայի (Տարեգիրք 16, էջ 10), 1981թ. հունիսի 11-ի Իսպանիայի (Տարեգիրք 24, էջ 8), 1985թ. օգոստոսի 15-ի Լիխտենշտեյնի (Տարեգիրք 28, էջ 11) և 1985թ. նոյեմբերի 20-ի (Տարեգիրք 28, էջ 10) հայտարարությունները, ինչպես նաև ընդդեմ Իտալիայի ներկայացված թիվ 6323/73 զանգատը, վճիռ 4.3.73, D.R. 3, էջ 80): Թուրքիայի հայտարարության ժամկետային սահմանափակման հատուկ ձևակերպման կապակցությամբ Հանձնաժողովը նախապես գտել է, որ այս սահմանափակումը թույլ չի տալիս իրեն քննելու զանգատները, որոնք վերաբերում են մինչև 1987թ. հունվարի 28-ը կայացված այն վարչական որոշումներին, որոնք հաստատվել են 1987թ. հունվարի 28-ից հետո ընդունված վճիռներով (զանգատ թիվ 13623/88, վճիռ 13.4.89):

11. Ինչ վերաբերում է Թուրքիայի հայտարարության (i)- (v) կետերում տեղ գտած սահմանափակումներին, ապա դրանց իրավական կարգավիճակն այլ է: Սրանք, ի տարբերություն ժամկետային սահմանափակումների, 25-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակում չեն և, լինելով այլ բնույթի սահմանափակումներ (*ratione loci, ratione materiae* և *ratione personae*)՝ հստակորեն չեն արտոնվում այս հոդվածով: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը քննության է առել, ըստ պատասխանող Կառավարության պնդման, դրանց համապատասխանությունը 25-րդ հոդվածին:

12. Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն և «պայմանագրի բառերին իրենց համատեքստում սովորական իմաստ տալով և ելնելով դրա նպատակից ու մտադրությունից»:

13. Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի սովորական իմաստին, ապա Հանձնաժողովը համարում է, որ «Կոնվենցիայում շարադրված այն իրավունքները» արտահայտությունը ենթադրում է ամբողջական, այլ ոչ մասնակի ճանաչում: Այլապես Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետում կնշվեր «որոշ» կամ «որևէ» իրավունքներ:

14. Այնուհետև Հանձնաժողովը 25-րդ հոդվածը դիտարկել է Կոնվենցիայի, որպես ամբողջության, համատեքստում:

15. Հանձնաժողովը նշում է, որ համաձայն 64-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասության, որևէ պետություն Կոնվենցիան ստորագրելիս կամ իր վավերագիրը հանձնելիս կարող է վերապահում կատարել՝ կապված Կոնվենցիայի որևէ կոնկրետ դրույթի հետ այն առումով, որ այդ պահին իր տարածքում ուժի մեջ գտնվող որևէ օրենք տվյալ դրույթին չի համապատասխանում: Այս դրույթի պարզ սահմանումից («Կոնվենցիան ստորագրելիս կամ իր վավերագիրն ի պահ հանձնելիս») հետևում է, որ Բարձր պայմանավորվող կողմը չի կարող ավելի ուշ փոփոխում անհատական զանգատների իրավունքը ճանաչելիս՝ էական փոփոխություններ կատարել Կոնվենցիայից բխող իր պարտավորություններում՝ 25-րդ հոդվածի հիման վրա վարույթի նպատակի համար: Պատասխանող Կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ 25-րդ հոդվածի հիման վրա իրենց հայտարարության լրացուցիչ դրույթները չպետք է դիտարկվեն որպես «վերապահումներ»՝ միջազգային պայմանագրերի իրավունքի տեսանկյունից:

16. Հանձնաժողովը նկատում է, որ եթե Թուրքիայի հայտարարության (ii), (iv) և (v) կետերում տեղ գտած *ratione materiae* վերապահումները համարվեն վավերական, ապա դրա արդյունքը կլինի այն, որ Կոնվենցիայի առանձին իրավունքների երաշխիքները 25-րդ հոդվածի հիման վրա վարույթներում կտարբերվեն նույն իրավունքների երաշխիքներից, որոնք կիրառվում են 24-րդ հոդվածի հիման վրա վարույթներում: Սակայն Հանձնաժողովի

իրավագործությունը Կոնվենցիայի իրավունքների էության առումով չի կարող տարբերվել երկու վարույթների դեպքում:

17. Եզրակացությունը, որ 25-րդ հոդվածը միայն թույլատրում է ժամկետային սահմանափակումներ, որոնք ակնհայտորեն թույլատրված են այդ հոդվածի երկրորդ կետում, իր հաստատումն է գտնում նաև 46-րդ հոդվածի հետ համեմատության մեջ, որն իր 2-րդ կետում սահմանում է, որ Հանձնաժողովի իրավագործության ճանաչմանը վերաբերող բոլոր հայտարարությունները «կարող են արվել... որոշակի ժամկետի համար»: Այս դրույթը նման է 25-րդ հոդվածի 2-րդ կետին: 46-րդ հոդվածի 2-րդ կետը այնուհետև սահմանում է, որ 1-ին կետի հիման վրա արվող հայտարարությունները «կարող են արվել առանց որևէ պայմանի կամ որոշ կամ փոխադարձության պայմանով՝ մի քանի կամ որոշ այլ Բարձր պայմանավորվող կողմերի մասով»: Ինչպես Հանձնաժողովն արդեն նշել է Կջելդսեն, Բուսկ Մադսեն և Պեդերսեն գործում, այս հոդվածով որևէ այլ պայման չի թույլատրվում (Եվրո-պական դատարան, H.R. Շարքեր Բ, թիվ 21, էջ 119, նաև Եվրոպական դատարան, H.R. «Լինգվիստիկ» գործ, Շարքեր Բ, թիվ 3, Հատոր1-ին, էջ 432):

18. Դատարանը նաև նշում է, որ թիվ 4 արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետը և թիվ 7 արձանագրության 7-րդ հոդվածի 2-րդ կետը (U4-6-2, U7-7-2) սահմանում են, որ անհատական գանգատի իրավունքը, որը ճանաչվում է Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությամբ՝ ազդեցություն չի ունենա Արձանագրության առնչությամբ, մինչև որ տվյալ պետությունը չներկայացնի այդ իրավունքը ճանաչելու մասին հայտարարություն: Ինչպես նշել են դիմողները, նմանատիպ ակնհայտորեն արտահայտված դրույթի անհրաժեշտությունը չէր լինի, եթե 25-րդ հոդվածը պետությանը թույլ տար անհատական գանգատների իրավունքը ճանաչելիս միակողմանիորոն ներկայացնել սահմանափակումներ:

19. Այնուհետև Հանձնաժողովը Կոնվենցիայի 25-րդ հոդվածի (i)- (v) կետերում տեղ գտած հինգ սահմանափակումները քննության է առել՝ ելնելով Կոնվենցիայի առարկայից և նպատակից:

20. Կոնվենցիայի նախաբանից հստակորեն հետևում է, որ Բարձր պայմանավորվող կողմերը Կոնվենցիային միանալիս՝ նպատակ ունեին հասնելու ավելի կուռ միասնության՝ մարդու իրավունքների մասին ընդհանուր պատկերացումների և մոտեցումների առումով, և քայլեր ձեռնարկել 1-ին բաժնում ամրագրված իրավունքների և ազատությունների կոլեկտիվ կատարման համար: Ավստրիան ընդդեմ Իտալիայի գործում (2iv 788/60 դեկ. 11.1.61, ժողովածու 7, պ. 23, էջ 40-43= Տարեգիրք 4 պ. 116 էջ 136-142 ) Հանձնաժողովը գտել է, որ Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմերի համար նպատակը «Եվրոպայի ազատ ժողովրդավարությունների ընդհանուր հասարակարգի ստեղծումն է», և որ Կոնվենցիայի Կողմերի պարտավորությունները «հիմնականում ունեն օբյեկտիվ բնույթ»: այս բնույթը երևան է գալիս նաև կոլեկտիվ կատարման համար Կոնվենցիայով նախատեսված մեխանիզմում. «Պետությունների պարտավորություններն ավելի շուտ կոչված են Բարձր պայմանավորվող որևէ պետության կողմից ոտնահարվող՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը, քան այդ Բարձր պայմանավորվող կողմերի համար սուբյեկտիվ և փոխադարձ իրավունքներ ստեղծելուն»:

21. Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործում (Եվրոպական դատարան, H.R. 1978թ. հունվարի 18-ի վճիռ, Շարքեր Ա, թիվ 25, էջ 90, կետ 239) Հանձնաժողովը արտահայտել է նմանօրինակ կարծիք առ այն, որ, ի տարբերություն դասական տիպի պայմանագրերի, «Կոնվենցիան ավելին է, քան որպես պարզապես պայմանագրի անդամ պետությունների միջև փոխադարձ

կապեր: Այն առաջին հերթին ստեղծում է փոխադարձ, երկկողմ պարտավորությունների և օբյեկտիվ պարտականությունների շրջանակ, որը «Նախաբանի» խոսքերով՝ շահում է «կոլեկտիվ կատարումից»:

22. Այս գործում Հանձնաժողովը գտնում է, որ Կոնվենցիայի բնույթը՝ որպես մարդու իրավունքների բնագավառում եվրոպական հասարակական կարգի սահմանադրական փաստաթուղթ, մերժում է գանգատը համանմանությամբ, ինչը առաջարկվել է պատասխանող Կառավարության կողմից, որը հիմնվում էր Միջազգային արդարադատության դատարանի Կանոնադրության պետության պրակտիային վերաբերող 36-րդ հոդվածի 3-րդ կետի վրա: Այս դրույթի հիման վրա կատարված հայտարարությունները պարզապես փոխադարձ համաձայնություն են ստեղծում պայմանավորվող կողմերի միջև: Հանձնաժողովը նշում է, որ Կանոնադրության 36-րդ հոդվածի 3-րդ կետը, ի տարբերություն Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 25-րդ հոդվածի, չի վերաբերում անհատական գանգատներին, այլ տարածվում է Պետությունների գանգատների վրա: Կոնվենցիայում պետությունների գանգատները կարգավորվում են 24-րդ հոդվածով: Այս դրույթի հիման վրա այդ գանգատները կարող են, առանց որևէ հավելյալ համաձայնագրի կամ առանց փոխադարձության որևէ պայման բավարարելու, ներկայացվել որևէ պետության կողմից, որը վավերացրել է Կոնվենցիան (Ավստրիան ընդդեմ Իտալիայի գործը, loc. Cit. թիվ 9940-44/82, Ֆրանսիան, Նորվեգիան, Դանիան, Շվեդիան և Հոլանդիան ընդդեմ Թուրքիայի վճիռ 6.12.83, D.R. 35, պ. 143, էջ 168-170):

23. Վերջապես Հանձնաժողովը քննության է առել նաև 1987թ. հունվարի 28-ի Թուրքիայի հայտարարությունից առաջ և հետո Կոնվենցիայի պրակտիկան՝ Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, որը սահմանում է, որ բացի համատեքստից՝ պետք է հաշվի առնվեն նաև. ա) կողմերի միջև ցանկացած հետագա համաձայնագիր՝ կապված պայմանագրի մեկնաբանության կամ դրանում տեղ գտած դրույթների կիրառման հետ, և բ) պայմանագրի կիրառման որևէ հետագա պրակտիկա, որն ստեղծում է կողմերի միջև համաձայնություն դրա մեկնաբանության վերաբերյալ:

24. Լսումների ժամանակ պատասխանող Կառավարությունը հիմնվել է 1966թ. հունվարի 14-ի Միացյալ Թագավորության հայտարարության երկրորդ կետում (Տարեգիրք 9, էջ 8-9) տեղ գտած տարածքային սահմանափակումների վրա, որոնք բացառում էին գանգատներ «ցանկացած այնպիսի տարածքում տեղի ունեցածի կամ կատարվածի վերաբերյալ, որոնց առնչությամբ... Հանձնաժողովի... իրավագործությունը չի ճանաչվել Միացյալ Թագավորության կառավարության կողմից, կամ այն գանգատների կապակցությամբ, որոնք ներկայացվել են որևէ արարքի կամ իրադարձության կապակցությամբ, որը տեղի է ունեցել Միացյալ Թագավորությունում՝ տարածքի կամ այնտեղ առաջացող խնդիրների հետ կապված»:

25. Հանձնաժողովը նշում է, որ այս դրույթը բացառում է ոչ միայն տեղական, այլև կենտրոնական որոշումները, օրինակ՝ Միացյալ Թագավորությունում Պետական խորհրդի որոշումները, որոնք վերաբերում են մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքներին: Սակայն այս սահմանափակումը Միացյալ Թագավորությունը կատարել է Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա, որը Բարձր պայմանավորվող կողմերին թույլատրում է 25-րդ հոդվածի հիման վրա հայտարարությունների կիրառումը սահմանափակել 63-րդ հոդվածում նշված մետրոպոլիայից դուրս գտնվող տարածքների առնչությամբ: Ներկա գործի կապակցությամբ Հանձնաժողովը կոչված չէ ճշտելու, թե արդյոք Միացյալ Թագավորությունը վերը նշված հայտարարության մեջ ճիշտ է կիրառել 63-րդ հոդվածը: Հանձնաժողովը ստորև կանդրադառնա այն հարցին, թե արդյո՞ք 63-րդ հոդվածը որևէ կապ ունի ներկա գանգատների հետ:

26. Ինչ վերաբերում է Թուրքիայի՝ 1987թ. հունվարի 28-ի հայտարարությանը հաջորդած պրակտիկային, ապա Յաննաժոզովը նշում է, որ հայտարարությունում տեղ գտած սահմանափակումները մերժվել էին մեկ Բարձր պայմանավորվող կողմի, այն է՝ Յունաստանի կողմից, և որ Շվեդիայի, Լյուքսեմբուրգի, Դանիայի, Նորվեգիայի և Բելգիայի կառավարությունները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ որպես ավանդապահ, ներկայացրել են իրենց դիրքորոշումները Թուրքիայի հայտարարությամբ՝ Կոնվենցիայի վերաբերյալ բարձրացված լուրջ հարցերի առնչությամբ:

27. Պատասխանող Կառավարությունը լսումների ժամանակ նաև հիմնվել է 25-րդ հոդվածի համաձայն Կիպրոսի արտաքին գործերի նախարարի հայտարարության վրա, որն ի պահ էր հանձնվել 1988թ. սեպտեմբերի 5-ին և որում մասնավորապես ասվում էր.

« Կիպրոսի Յաննաժոզովի կառավարության անունից ես հայտարարում եմ, որ համաձայն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի ... Կիպրոսը ճանաչում է 1989թ. հունվարի 1-ից մինչև 1991թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար, ... Յաննաժոզովի ... իրավասությունը՝ ստանալու 1988թ. դեկտեմբերի 31-ից հետո ներկայացված գանգատներ ... որևէ անհատից, հասարակական կազմակերպությունից կամ մարդկանց խմբից, որոնք պնդում են, որ իրենք դարձել են Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտման զոհ՝ 1988թ. դեկտեմբերի 31-ից հետո ընդունված որևէ որոշման կամ այդ ժամանակից ի վեր տեղ գտած փաստերի կամ իրադարձությունների արդյունքում: ... 25-րդ հոդվածի հիման վրա Յաննաժոզովի իրավասությունը չպետք է տարածվի այն գանգատների վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիան և դրա Արձանագրությունները ենթադրաբար խախտող այն գործողություններին կամ անգործությանը, որոնցում Կիպրոսի Յաննաժոզովի կանվանվի պատասխանող Կառավարություն, եթե այդ գործողությունները կամ անգործությունը կապված են այն միջոցառումների հետ, որոնց Կիպրոսը ստիպված է եղել դիմելու՝ ելնելով այն իրավիճակի պահանջներից, որն ստեղծվել է Կիպրոսի տարածքի մի մասում Թուրքիայի Յաննաժոզովի կողմից շարունակվող բռնազավթման և ռազմական գործողությունների արդյունքում»:

28. Յաննաժոզովը նշում է, որ երբ 1988թ. սեպտեմբերի 12-ին Գլխավոր քարտուղարը փոխանցում էր Կիպրոսի՝ վերը նշված հայտարարությունը մյուս Բարձր պայմանավորվող կողմերին, նա հիշեցրել է, որ «համաձայն ընդհանուր նորմերի՝ այս հայտարարությունը, որն արվել է Կոնվենցիայի 25-րդ (3) հոդվածի հիման վրա, ոչ մի կերպ չի կանխորոշում այն իրավական հարցերը, որոնք կարող են ծագել՝ կապված տվյալ հայտարարության վավերականության հետ»: Այնուհետև Յաննաժոզովը բացատրում է, որ Կիպրոսի հայտարարության երկրորդ կետում տեղ գտած սահմանափակումը խնդրո առարկա չի եղել և չի որոշակիացվել, Յաննաժոզովի 1990թ. դեկտեմբերի 6-ի Սողիմոսն ընդդեմ Կիպրոսի գործով, թիվ 15070/89 գանգատի ընդունելիության վերաբերյալ որոշման ժամանակ:

29. Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները, Յաննաժոզովը Կոնվենցիայում չի գտնում որևէ իրավական հիմք 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված հայտարարության սահմանափակումների համար, բացի ժամկետային սահմանափակումներից, որոնք սահմանվում են այդ հոդվածի 2-րդ կետով:

30. Ի վերջո, Յաննաժոզովը քննության է առել Թուրքիայի հայտարարության (i) կետում պարունակվող տարածքային սահմանափակումը՝ Կոնվենցիայի 1-ին և 63-րդ հոդվածների տեսանկյունից, ինչպիսին կիրառվում է Կոնվենցիայի մարմինների կողմից՝ իրենց *ratione loci* իրավասությունները որոշելիս:

31. Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանվում է.

«Բարձր պայմանավորվող կողմերը պետք է ապահովեն իրենց իրավագործության սահմաններում գտնվող բոլորի իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի 1-ին բաժնում»:

32. Դիմողները պնդում են, որ Կիպրոսում Թուրքիայի զինված ուժերի և նրանց ենթակայության տակ գտնվող անձանց ենթադրյալ գործողությունները Թուրքիայի իրավագործության շրջանակներում են՝ 1-ին հոդվածի իմաստով: Հանձնաժողովը հիշեցնում է, որ Կոնվենցիայի կիրառումը չի սահմանափակվում Բարձր պայմանավորվող կողմերի ազգային սահմաններով, այլ նաև տարածվում է պետական մարմինների՝ արտասահմանում կատարած գործողությունների վրա: Կոնվենցիայի 24-րդ հոդվածի հիման վրա կատարված միջպետական վարույթում, թիվ 6780/74 և 6950/75 գանգատներում (Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի, վճիռ 26.5.75, D.R. 2 պ.125, էջ 136-137 ), Հանձնաժողովը հայտարարել է.

«8. Կոնվենցիայի 1-ին հոդվածում Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ապահովել 1-ին բաժնում սահմանված իրավունքները և ազատությունները բոլորի համար՝ «իրենց իրավագործության շրջանակում» (Ֆրանսերեն տեքստում՝ «*relevant de leur juridiction*»): Հանձնաժողովը գտնում է, որ այս արտահայտությունը հավասարազոր չէ և չի սահմանափակվում, ինչպես պնդել է պատասխանող Կառավարությունը, տվյալ Բարձր պայմանավորվող կողմի պետական տարածքով: Եվ տեքստից՝ հատկապես ֆրանսերեն տեքստից, և այս հոդվածի նպատակից, և ընդհանրապես ամբողջ Կոնվենցիայի նպատակից և իմաստից ակնհայտ է, որ Բարձր Պայմանավորվող կողմերը պարտավորվում են ապահովել նշված իրավունքները և ազատություններն իրենց փաստացի իշխանության և պատասխանատվության տակ գտնվող բոլոր անձանց համար՝ անկախ այն փաստից, թե այդ իշխանությունը գործադրվում է իրենց երկրի ներսում, թե՛ արտասահմանում...

Հանձնաժողովը նկատում է նաև, որ պետության քաղաքացիները, ներառյալ գրանցված նավերը և ինքնաթիռները, մասամբ գտնվում են իր իրավագործության տակ՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ են գտնվում, և որ պետության լիազորված ներկայացուցիչները, ներառյալ՝ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցիչները, ինչպես նաև զինված ուժերն արտասահմանում գտնվելիս ոչ միայն շարունակում են մնալ այդ պետության իրավագործության տակ, այլ նաև «այդ իրավագործության տակ են» մտցնում բոլոր այն անձանց և գույքը, որոնց նկատմամբ գործադրում են իրենց իշխանությունը: Այնքանով, որքանով իրենց գործողություններով կամ անգործությամբ նրանք ազդում են այդպիսի անձանց և գույքի վրա, Պետությունը պատասխանատու է այդ գործողությունների կամ անգործության համար:

9. Հանձնաժողովը չի գտնում, որ 63-րդ հոդվածը, որը նախատեսում է Կոնվենցիայի տարածումը նաև Բարձր պայմանավորվող կողմերի մետրոպոլիայի տարածքներից դուրս գտնվող տարածքների վրա, կարող է մեկնաբանվել որպես 1-ին հոդվածում «իրավագործություն» տերմինի շրջանակը՝ մետրոպոլիայի տարածքով սահմանափակող: 63-րդ հոդվածի նպատակը ոչ միայն Կոնվենցիայի տարածքային ընդլայնումն է, այլ նաև մետրոպոլիայից դուրս գտնվող որոշ տարածքների ինքնակառավարման և մշակութային ու հասարակական տարբերություններին ադապտացվելն է: 63-րդ հոդվածի 3-րդ կետը հաստատում է այս մեկնաբանությունը: Սա չի նշանակում, որ այն տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է 63-րդ հոդվածը, դուրս են «իրավագործության» շրջանակից՝ 1-ին հոդվածի իմաստով:

10. 1-ին հոդվածի վերոնշյալ մեկնաբանությունից հետևում է, որ Հանձնաժողովի՝ գանգատներ քննելու իրավասությունը՝ այնքանով որքանով

դրանք վերաբերում են Կիպրոսում Կոնվենցիայի ենթադրյալ խախտումներին, չի կարող բացառվել այն հիմքով, որ Թուրքիան՝ տվյալ գործում պատասխանող կողմը, ո՛չ Կիպրոսի որևէ շրջան միացրել է իր տարածքին, ո՛չ էլ, ըստ պատասխանող Կառավարության, այնտեղ ստեղծել է ռազմական կամ քաղաքացիական կառավարություն:

Մնում է քննության առնել, թե արդյո՞ք Կոնվենցիայի համաձայն՝ Թուրքիան բոլոր դեպքերում պատասխանատու է, քանի որ Կիպրոսում ռազմական գործողությունների ընթացքում բնակչությունը և գույքն անցել էին Թուրքիայի փաստացի իշխանության և պատասխանատվության տակ: Այս կապակցությամբ պատասխանող Կառավարությունը չի վիճարկում այն հանգամանքը, որ Թուրքիայի զինված ուժերը մտել են Կիպրոս կղզի՝ գործելով բացառապես Թուրքիայի կառավարության ղեկավարությամբ և համաձայն այդ զինված ուժերի կառուցվածքն ու հրամանատարությունը, ներառյալ՝ ռազմական դատարանների գործունեությունը կանոնակարգող նորմերի: Սրանից հետևում է, որ այս զինված ուժերը Թուրքիայի լիազորված ներկայացուցիչներն են, և որ նրանք Կիպրոսում ցանկացած անձի կամ գույք մտցնում են Թուրքիայի «իրավագործության» տակ՝ 1-ին հոդվածի իմաստով, քանի որ իրականացնում են վերահսկողություն այդ անձանց կամ գույքի նկատմամբ: Այդ իսկ պատճառով՝ այնքանով, որքանով այս զինված ուժերի գործողություններն ու անգործությունն ազդում են այս անձանց՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների վրա, Թուրքիան պատասխանատու է դրանց համար»:

33. Վերոնշյալ տեսակետը հետագայում Հանձնաժողովի կողմից հաստատվել և իր հետագա զարգացումն է ստացել թիվ 8007/77 գանգատի կապակցությամբ (Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի, վճիռ 10.7.78, D.R. 13, պ. 85, էջ 148-150), և շարադրվել է հետևյալ կերպ.

«22. Հանձնաժողովը տվյալ գործի կապակցությամբ այս եզրակացությանը հանգեցիս՝ ցանկություն ունի ավելացնելու հետևյալ նկատառումները՝ կապված պատասխանող Կառավարության կողմից «Կիպրոսի Դաշնային Թուրքական Պետություն» ձևակերպումը վկայակոչելու հետ.

23. Կողմերը չեն վիճարկում այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան շարունակում է կիրառվել Կիպրոսի Հանրապետության ամբողջ տարածքի նկատմամբ, և որ 1974թ. սկսած՝ երկրի հյուսիսային մասում կանխվել է դիմող Կառավարության իրավագործության գործադրումը: Պատասխանող Կառավարության Կիպրոսի Հանրապետության կառավարության կողմից, իրավագործության փաստացի գործադրման այս սահմանափակումը պայմանավորված է կղզու հյուսիսային շրջանում Թուրքիայի զինված ուժերի ներկայությամբ: Պատասխանող Կառավարությունը հայտարարում է, որ իր զինված ուժերի ներկայությունն այդ շրջանում արդարացված է ինչպես 1960թ. Երաշխիքների մասին պայմանագրով, այնպես էլ «Կիպրոսի Դաշնային Թուրքական Պետության» ցանկությամբ, որը 1975թ. հայտարարել է կղզու հյուսիսային մասում իր ստեղծման մասին:

24. Հանձնաժողովը կոչված չէ կարծիք արտահայտելու այս երկու ենթադրյալ արդարացումների վավերականության վերաբերյալ՝ համաձայն ընդհանուր իրավունքի: Սակայն պարտավոր է նկատել, որ Բարձր պայմանավորվող կողմերից մեկը՝ այն է Կիպրոսը, 1974թ. սկսած իր տարածքի հյուսիսային մասում հնարավորություն չի ունեցել գործադրելու իր իրավագործությունը, քանի որ այնտեղ են գտնվել մյուս Բարձր պայմանավորվող կողմի՝ Թուրքիայի, զինված ուժերը: Պետք է նկատել նաև, որ Թուրքիայի կողմից այդ տարածքում Կիպրոսի թուրքական վարչակարգի

ճանաչումը որպես «Կիպրոսի Դաշնային Թուրքական Պետության» համաձայն պատասխանող Կառավարության բացատրության՝ չի ազդում Կիպրոսի Հանրապետության՝ որպես ամբողջական պետության և Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմի շարունակվող գոյության վրա, և որ, հետևաբար, « Կիպրոսի Դաշնային Թուրքական Պետությունը », չի կարող դիտվել որպես մի միավոր, որն իրավագործություն է իրականացնում Կիպրոսի որևէ շրջանի նկատմամբ՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով:

25. Հանձնաժողովը եզրակացնում է, որ Կիպրոսի Հանրապետության հյուսիսային շրջանում Թուրքիայի իրավագործությունը, որի առկայությունը պայմանավորված է այնտեղ Թուրքիայի զինված ուժերի ներկայությամբ, ինչը խոչընդոտում է դիմող Կառավարության իրավագործության գործադրմանը, չի կարող բացառվել այն հիմքով, որ այդ շրջանում իրավագործությունը ենթադրաբար գործադրվում է «Կիպրոսի Դաշնային Թուրքական Պետության» կողմից:

34. Կոնվենցիայի 1-ին հոդվածը, ինչպես վերը մեկնաբանված է, հիմնավորում է այն տեսակետը, որ Թուրքիայի հայտարարության մեջ տեղ գտած տարածքային սահմանափակումը չի թուլատրվում 25-րդ հոդվածով:

35. Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք 63-րդ հոդվածը կարող է վկայակոչվել՝ կապված այն տեսակետի հետ, որ որոշակի տարածքային սահմանափակումներ կարող են վավերականորեն ավելացվել 25-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությունում, Հանձնաժողովը ներկայացնում է հետևյալ մոտեցումը:

36. 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված է, որ.  
« (1) Ցանկացած պետություն կարող է Կոնվենցիան վավերացնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով հայտարարել, որ տվյալ Կոնվենցիան կարող է տարածվել բոլոր կամ որոշ տարածքների վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է»:

«(4) Ցանկացած պետություն, որն այս հոդվածի 1-ին կետի հիման վրա ներկայացրել է հայտարարություն, կարող է դրանից հետո ցանկացած ժամանակ հայտարարությանը վերաբերող մեկ կամ ավելի տարածքների անունից հայտարարել, որ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն ճանաչում է անհատների, հասարակական կազմակերպությունների և անձանց խմբերի կողմից գանգատներ ստանալու՝ Հանձնաժողովի իրավագործությունը»:

37. Հանձնաժողովը նկատում է, որ 63-րդ հոդվածը չի կարող ուղղակիորեն կիրառվել տվյալ գործի նկատմամբ: Կիպրոսի հյուսիսային շրջանը չի հանդիսանում այնպիսի տարածք, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Թուրքիան՝ այս հոդվածի իմաստով: 63-րդ հոդվածի 4-րդ կետի համանմանությամբ կիրառումը, այսինքն՝ այն իմաստով, որ Բարձր պայմանավորվող կողմը կարող է վավերականորեն բացառել այն տարածքների

նկատմամբ անհատական գանգատների իրավունքը ճանաչող հայտարարության կիրառումը, որոնք պարզորոշ կերպով չեն կազմում իր մետրոպոլիայի տարածքի մաս, չի առաջարկվել պատասխանող Կառավարության կողմից՝ այս հարցի լուծումը թողնելով Չանձնաժողովին: Դիմողները, որոնք վիճարկում են հյուսիսային Կիպրոսում Թուրքիայի ներկայության օրինականությունը, մերժում են տվյալ գործի նկատմամբ 63-րդ հոդվածի կիրառման հնարավորությունը:

38. Չանձնաժողովը քննարկել է, թե արդյոք Կոնվենցիայի 63-րդ հոդվածի 4-րդ կետի համանմանությամբ կիրառումը հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները, կհամապատասխաներ Կոնվենցիայի նպատակին և մտադրությանը:

39. Դիմողները հայտարարում են, որ Չյուսիսային Կիպրոսում Թուրքիայի գործողությունների նկատմամբ 63-րդ հոդվածի կիրառումը կլիներ անօրինական, քանի որ միջազգային իրավունքի համաձայն Թուրքիայի ներկայությունն այդ շրջանում անօրինական է: Պատասխանող Կառավարությունը հայտարարում է, որ Թուրքիայի կողմից Կոնվենցիայի կատարման նկատմամբ վերահսկողության կապակցությամբ Թուրքիան կարող է Չանձնաժողովի առջև պատասխանատու լինել Կոնվենցիայի դրույթները ենթադրաբար չկատարելու համար՝ 24-րդ հոդվածի շրջանակներում:

40. Չանձնաժողովը կրկին անդրադարձել է Կոնվենցիայի վերը նկարագրված բնույթին և այն սկզբունքին, որն արտացոլված է 1-ին հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքում առ այն, որ Կոնվենցիան կիրառվում է Բարձր պայմանավորվող կողմի պետական սահմաններից դուրս և ներառում է պետական մարմինների գործողություններն արտասահմանում (տե՛ս վերը՝ կետեր 32 և 33): Չանձնաժողովը նաև հիշեցնում է, որ Կոնվենցիայի նպատակն է ապահովել «ոչ թե տեսական և երևակայական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ» (Եվրոպ. դատարան H.R. 1980թ. մայիսի 13-ի Արտիկոյի վճիռը,

Շարքեր Ա., թիվ 37, էջ 34, կետ 33): Այն սկզբունքը, որ Կոնվենցիայի իրավունքները պետք է ծառայեն պրակտիկ նպատակների (“effet utile”), Չանձնաժողովի կարծիքով, վերաբերում է ոչ միայն 1-ին բաժնում ամրագրված իրավունքներին, այլ նաև 25-րդ հոդվածի հիման վրա անհատական գանգատների՝ դատավարական հիմնական իրավունքին՝ սկսած այն պահից, երբ պետությունը ճանաչում է այդ իրավունքը: Վերջապես Չանձնաժողովն անդրադառնում է 1975թ. մայիսի 26-ի իր որոշման (ներկայացված վերը՝ պարբ. 32-ում) 9-րդ կետում տեղ գտած՝ 63-րդ հոդվածի նպատակի վերաբերյալ, ինչպես նաև իր 1978թ. հուլիսի 10-ի որոշման (ներկայացված վերը՝ պարբ. 33-ում) 23-րդ և 24-րդ կետերում տեղ գտած այն բացատրություններին, որոնք վերաբերում էին Յուսիսային Կիպրոսում Թուրքիայի զինված ուժերի ներկայությամբ պայմանավորված՝ Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմի՝ Կիպրոսի, իրավագործության գործադրման սահմանափակմանը: Կոչված չլինելով տեսակետ արտահայտել միջազգային իրավունքի համաձայն Յուսիսային Կիպրոսում Թուրքիայի ներկայության օրինականության վերաբերյալ՝ Չանձնաժողովը գտնում է, որ 63-րդ հոդվածի համանմանությամբ կիրառումն անհամատեղելի է այդ շրջանում տիրող հատուկ իրավիճակի հետ:

41. Չանձնաժողովը գտնում է, որ 63-րդ հոդվածի 4-րդ կետի համանմանությամբ կիրառումը, տվյալ գանգատների հանգամանքների պայմաններում, անհամատեղելի է Կոնվենցիայի առարկայի և նպատակի հետ:

42. Չանձնաժողովը գտնում է, որ 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի 1987թ. հունվարի 28-ի հայտարարության (i)- (v) կետերում տեղ գտած սահմանափակումները չեն թույլատրվում տվյալ հոդվածով: Այս եզրակացությունը չի ազդում Չանձնաժողովի նախորդ որոշումների վրա (օրինակ՝ թիվ 13623/88, վճիռ 13.4.89, և թիվ 13891/88, վճիռ 20.1.89), որոնք որպես վավերական ժամանակային սահմանափակումներ՝ 2-րդ կետի համաձայն կիրառում են Թուրքիայի հայտարարության վերջին պարբերության առաջին նախադասությունում բովանդակվող դրույթը:

գ) Թուրքիայի կողմից անհատական գանգատների իրավունքի ճանաչման վավերականությունը

43. Հանձնաժողովում լսումների ժամանակ Թուրքիայի կառավարության ներկայացուցիչն արել է հետևյալ հայտարարությունը

“ Le Gouvernement turc considère et a toujours considéré que les conditions, qui figurent dans sa déclaration selon l'article 25( Art.25), y compris la clause territoriale, ont un caractère essentiel pour la volonté du Gouvernement d'accepter le droit de recours individuel, a tel point que si une seule de ces conditions devait être rejetée, la déclaration dans sa totalité deviendrait caduque; dans un tel cas, la reconnaissance par la Turquie du droit de recours individuel n'existerait plus.”

44. Հանձնաժողովը հիշեցնում է, որ Հանձնաժողովի իրավասությունը՝ որոշելու 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված Թուրքիայի հայտարարության շրջանակը և վավերականությունը, Թուրքիան ակնհայտորեն ճանաչել է (տե՛ս վերը՝ կետ 4), և, որ Թուրքիան բազմիցս հայտարարել է, որ հայտարարության (i)- (v) կետերում տեղ գտած սահմանափակումները «չեն կարող համարվել «վերապահումներ»՝ միջազգային պայմանագրերի իրավունքի իմաստով»:

45. Հանձնաժողովը պետք է մեկնաբանի Թուրքիայի մտադրությունն այնպես, ինչպես այն արտահայտված է եղել 1987թ. հունվարի 28-ի հայտարարությունն անելու ժամանակ: Հանձնաժողովը հիշեցնում է, որ հայտարարությունն ի պահ է հանձնվել Թուրքիայի դեմ Ֆրանսիայի, Նորվեգիայի, Դանիայի, Շվեդիայի և Յուլանդիայի հարուցած վարույթի (գանգատներ թիվ 9940-9944/82) բարեկամական կարգավորումից հետո և մի փոքր ավելի շուտ, քան 1987թ փետրվարի 1-ին կարգավորման ժամանակ համաձայնեցված (տե՛ս Ընդ. Հաշվետվություններ 7.12.85, D.R., 44, էջ. 31, 38f:) զեկույցների ներկայացման ընթացակարգի համար նախատեսված ժամկետի լրանալը: 25-րդ հոդվածի համաձայն հայտարարություն անելով՝ Թուրքիան ցուցաբերել է իր պատրաստակամությունը ենթարկվելու Կոնվենցիայի համակարգին, ներառյալ նաև՝ 25-րդ հոդվածի հիման վրա անհատական գանգատներին:

46. Այն դեպքում, երբ պետությունը հստակորեն արտահայտում է իր՝ 25-րդ հոդվածին (հոդ.25) ենթարկվելու պատրաստակամությունը, բայց միևնույն ժամանակ իր հայտարարությանն ավելացնում է սահմանափակումներ, որոնք անհամատեղելի են Կոնվենցիայի հետ, պետք է գերակայի պետության հիմնական մտադրությունը: Հանձնաժողովը գտնում է, որ Թուրքիայի վերջին հայտարարությունն առ այն, որ ինքը պատրաստ է ընդունել 25-րդ հոդվածի հիման վրա իր հայտարարությամբ նախատեսված պարտավորությունները միայն այն պայմանով, եթե դրանում տեղ գտած բոլոր պայմանները վավերական են, հակասում է ինչպես նրա՝ վերը նշված այլ հայտարարություններին, այնպես էլ Կոնվենցիայի առարկային և նպատակին: Այդ իսկ պատճառով այն չի կարող գերակայել այս փաստաթղթի շրջանակներում:

47. Հանձնաժողովը հիշեցնում է, որ երբ Դատարանը գտել է, որ Շվեյցարիայի մեկնաբանական հայտարարությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 64-րդ հոդվածի պահանջներից երկուսին, «այն հետևանքով, որ այն պետք է համարվի անվավեր», միևնույն ժամանակ գտել է, որ «Շվեյցարիան, անկասկած, անկախ իր հայտարարության վավերականությունից, համարվում է Կոնվենցիայից բխող պարտավորություններով կապված» (1988թ. ապրիլի 29-ի Բելիոսի վճիռը, Եվր. դատարան H.R., Շարքեր Ա, թիվ 132, էջ 28, կետ 60): Տվյալ համատեքստում Հանձնաժողովը նշում է այն սկզբունքը, որը հաճախ օգտագործվում է այն դեպքերում, երբ իրավական փաստաթղթի որոշ հատվածներ անվավեր են ճանաչվում: Այդ նորմն արտահայտվում է լատիներեն “ ut res magis valeat quam pereat” արտահայտությամբ:

48. Վերոնշյալ եզրահանգումներից հետևում է, որ Թուրքիան իր՝ 1987թ. հունվարի 28-ի հայտարարությամբ, միայն ժամկետային սահմանափակմամբ և

վավերականորեն, Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա ճանաչել է անհատական զանգատի իրավունքը:

49. Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ իրավասու է *ratione loci*, Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի՝ 1987թ. հունվարի 28-ի հայտարարության՝ համաձայն քննելու տվյալ զանգատները:

դ) Հանձնաժողովի *ratione temporis* իրավասությունը՝ կապված Կոնվենցիայի 25-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի ներկայացրած հայտարարության հետ

50. Դեռ պետք է քննության առնվի, թե արդյո՞ք Հանձնաժողովը նաև իրավասու է *ratione temporis*՝ հաշվի առնելով այն, որ հայտարարությունը միայն «տարածվում է այն փաստերի, ներառյալ այդ փաստերի հիման վրա ընդունված դատավճիռների վերաբերյալ զանգատների վրա, որոնք տեղի են ունեցել սույն հայտարարությունն ի պահ հանձնելու օրվանից հետո»:

51. Այս կետը ոչ մի ազդեցություն չունի Հանձնաժողովի իրավասության վրա՝ կապված թիվ 15299/89 և 15300/89 զանգատների այն վիճարկումների հետ, որոնք վերաբերում են Կոնվենցիայի այն խախտումներին, որոնք ենթադրաբար տեղի են ունեցել 1989թ. մարտին:

52. Ոչ էլ ազդում է Հանձնաժողովի իրավասության վրա՝ կապված թիվ 15318/89 զանգատում տեղ գտած այն բողոքների հետ, որոնք վերաբերում են ենթադրաբար 1989թ. մարտին տեղի ունեցած՝ Կոնվենցիայի խախտումներին:

53. Սակայն իրավական վիճակն այլ է այնքանով, որ երրորդ դիմողը վկայակոչում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտումը:

54. Երրորդ դիմողի բացատրությունները, որոնք վկայակոչում են շարունակական խախտման գաղափարը, ներկայացվել են նկատի առնելով Կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսված վեց ամսվա կանոնը և հիմնականում վերաբերում են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող զանգատին:

55. Հանձնաժողովն իր նախորդ որոշումներով ընդունել է, որ այն դեպքում՝ «երբ ստեղծվում է մի մշտական իրավիճակ, որը շարունակվում է», վեց ամսվա կանոնի հարցը «կարող է ծագել միայն այն բանից հետո, երբ ստեղծված իրավիճակը կդադարի գոյություն ունենալուց» (Դե Բեկերի գործը, Տարեգիրք 2, էջ 214, 244, Հունաստանի Առաջին գործը, ընդունելիության երկրորդ որոշում, ժողովածու 26, էջ 80, 110= Տարեգիրք 11, էջ 730, 778):

56. Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն Կիպրոսի ներկայացրած թիվ 8007/77 զանգատում տեղ գտած՝ Հյուսիսային Կիպրոսի տարածքում Թուրքիայի կողմից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակվող, *inter alia*, խախտման վերաբերյալ զանգատների առնչությամբ Հանձնաժողովը հայտարարել է հետևյալը (վճիռ 10.7.78, D.R. 13, պ. 85, էջ 154).

« 45. Հանձնաժողովը նկատում է, ...որ, պետությունների զանգատների ընդունելիության վարույթի ընթացքում, ... իր խնդիրը չէ նույնիսկ այդ զանգատների ըստ էության նախնական քննությունը, քանի որ 27-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները ... կիրառվում են, իրենց հստակ շարադրանքին համապատասխան, միայն 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված անհատական զանգատների նկատմամբ...»

Հետևաբար, Հանձնաժողովը չի կարող վարույթի այս փուլում քննել ... թե արդյո՞ք Կոնվենցիայի «շարունակվող խախտմանը» վերաբերող զանգատներն հիմնավոր են, թե՛ ոչ: Վերոնշյալից հետևում է նաև, որ դիմող Կառավարության այն պնդումը, թե վեց ամսվա կանոնը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանգատը վերաբերում է նման «շարունակվող խախտմանը», պետք է ընդունվի:

46. Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը չի կարող մերժվել Կոնվենցիայի 26-րդ հոդվածի և 27-րդ հոդվածի (3)-րդ կետի հիման վրա՝ վեց ամսվա կանոնը չբավարարելու հիմքով»:

57. 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված տվյալ գանգատի կապակցությամբ Հանձնաժողովը նախնական վեց ամսվա կանոնի վերաբերյալ հարցը քննարկելիս, պետք է քննի այս հոդվածի համաձայն Թուրքիայի հայտարարության ժամկետային սահմանափակման ազդեցությունը:

58. Հանձնաժողովը նախկինում արդեն ընդունել է, որ այս սահմանափակման հատուկ ձևակերպումները բացառում են այն գանգատների քննությունը, որոնց առարկան 1987թ. հունվարի 28-ից առաջ ընդունված այն վարչական որոշումներն են, որոնք հաստատվել են վերոնշյալ ամսաթվից հետո կայացված վճիռներով (տես վերը՝ պարբ.11):

59. Այս բացատրությունը կիրառելով սույն գործի նկատմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ ելնելով Թուրքիայի՝ 25-րդ հոդվածի հիման վրա ներկայացված հայտարարության մեջ տեղ գտած ժամկետային սահմանափակումից, ինքը չի կարող քննել շարունակվող խախտման մասին գանգատը, քանի որ այն վերաբերում է մինչև 1987թ. հունվարի 29-ն ընկած ժամանակահատվածին:

60. Հանձնաժողովը եզրակացնում է, որ *ratione temporis* իրավասու չէ համաձայն այս հայտարարության՝ քննարկել երրորդ դիմողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի՝ 1974թ. հուլիսի 20-ից մինչև 1987թ. հունվարի 28-ը ժամանակահատվածում շարունակական խախտման մասին գանգատները: Հետևաբար, թիվ 15318/89 գանգատը համատեղելի չէ Կոնվենցիայի դրույթների հետ՝ 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

## **II. Արդյո՞ք գանգատներն ակնհայտորեն անհիմն են**

### **ա) Գանգատներ թիվ 15299/89 և 15300/89**

61. Առաջին և երկրորդ դիմողները գանգատվում են իրենց կալանավորման, ենթադրաբար իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի, ինչպես նաև 1989թ. հուլիսին Յուսիսային Կիպրոսում տեղի ունեցած դատական վարույթի առնչությամբ: Նրանք պնդում են, որ վիճարկվող բոլոր գործողություններն իրագործվել են Կիպրոսի հյուսիսում տեղակայված Թուրքիայի զինված ուժերի կամ նրանց ենթակայության տակ գտնվող այլ ուժերի կողմից, և վկայակոչում են Կոնվենցիայի 1-ին, 3, 5, 6, 7, 9 և 13-րդ հոդվածների խախտումները:

62. Պատասխանող Կառավարությունը հերքում է դիմողների ներկայացրած փաստերը և հայտարարում, որ Թուրքիայի զինված ուժերը չեն միջամտել 1989թ. հուլիսի 15-ի իրադարձություններին, և որ ոչ մի կապ չունեն այդ իրադարձությունների հետ:

63. Հանձնաժողովը գտնում է, որ առաջին և երկրորդ դիմողների գանգատներից բխում են փաստի և իրավունքի խրթին հարցեր, որոնք պահանջում են գանգատների ըստ էության քննություն: Հետևաբար, թիվ 15299/89 և 15300/89 գանգատները Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ակնհայտորեն անհիմն չեն:

### **բ) Գանգատ թիվ 15318/89**

64. Երրորդ դիմողը գանգատվում է առ այն, որ 1989թ. մարտի 19-ին, երբ փորձում էր վերադառնալ Կիպրոսի հյուսիսում գտնվող իր սեփականություն հանդիսացող տարածքը, կալանավորվել է: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ

հողվածների խախտում և Կոնվենցիայի 8-րդ հողվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հողվածի շարունակական խախտում:

65. Պատասխանող Կառավարությունը վիճարկում է երրորդ դիմողի ներկայացրած փաստերը:

66. Հանձնաժողովը գտնում է, որ երրորդ դիմողի՝ Կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հողվածների խախտման վերաբերյալ գանգատները՝ կապված 1989թ. մարտին իր կալանավորման հետ, առաջ են քաշում փաստի և իրավունքի խրթին հարցեր, որոնք պահանջում են գանգատի ըստ էության քննություն: Հետևաբար, այս գանգատներն ակնհայտորեն անհիմն չեն:

67. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հողվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հողվածի շարունակական խախտումներին, Հանձնաժողովն արդեն գտել է, որ, ելնելով Թուրքիայի հայտարարության մեջ տեղ գտած ժամկետային սահմանափակումից՝ Հանձնաժողովը չի կարող քննել շարունակվող խախտումների մասին երրորդ դիմողի գանգատները, քանի որ դրանք ենթադրաբար վերաբերում են 1987թ. հունվարի 29-ից առաջ ընկած ժամանակահատվածին:

68. Դիմողի այն գանգատից, որ նրան թույլ չեն տվել մուտք գործել Կիպրոսի հյուսիսում գտնվող իր սեփականություն հանդիսացող տարածք 1987թ հունվարի 28-ից հետո, բխում է հարց, ինչը պահանջում է գանգատը քննության առնել ըստ էության՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հողվածի հիման վրա, սակայն Կոնվենցիայի 8-րդ հողվածի հիման վրա՝ կապված երրորդ դիմողի՝ իր տան նկատմամբ հարգանքի իրավունքի հետ, որևէ հարց չի ծագում: Հանձնաժողովը նշում է, որ դիմողը մեծացել է Հյուսիսային Կիպրոսում գտնվող Կիրենիայում, սակայն 1972թ. ամուսնացել է և իր ամուսնու հետ տեղափոխվել Նիկոսիա: Հանձնաժողովը եզրակացնում է, որ եթե դիմողի գանգատն առ այն, որ 1987թ. հունվարի 28-ից հետո իրեն մերժվել է մուտք գործել իր սեփականություն հանդիսացող տարածք, դիտարկվի խախտում Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հողվածի հիման վրա, ապա այդ գանգատն ակնհայտորեն անհիմն չէ:

Այս հիմքերով Հանձնաժողովը մեծամասնությամբ

1. ԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ թիվ 15299/89 և 15300/89 գանգատները, առանց գանգատներն ըստ էության կանխավ գնահատելու,

2. (ա) ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ թիվ 15318/89 գանգատի այն մասը, որը վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հողվածի և թիվ 1 արձանագրության 1-ին հողվածի շարունակական խախտմանը, որը ենթադրաբար տեղի է ունեցել մինչև 1987թ. հունվարի 29-ը.

(բ) ԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ այս գանգատի մնացած մասերը, առանց գործն ըստ էության կանխավ գնահատելու:

Հանձնաժողովի քարտուղար

Հանձնաժողովի նախագահ

(Հ.Ս. ԿՐՅՈՒԳԵՐ)

(Ս.Ա.ՆՈՐԳԱՍՐԴ)